

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

2014 թվականը մեր բուհի պատմության մեջ իրադարձային եղավ. ՀՀ Կառավարության ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշման համաձայն՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը վերանվանվեց «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ: Անշուշտ, կատարվածը սուկ անվանափոխություն չէ, քանի որ արդյունքում չեն ենթադրվում միայն փաստաթղթային փոփոխություններ: Իրականում այս անվանափոխությունից հետևում են մի շարք բովանդայաին արմատական փոփոխություններ՝ պայմանավորված այն մարտահրավերներով, որոնց այսօր փորձում են դիմակայել համալսարաններն առհասարակ, մասնավորապես նաև Երևանի պետական համալսարանը, որի գործունեությունը մեր բուհի հետագա զարգացման ճանապարհին կդառնա օրինակելի, և որին հետևելով՝ մենք պետք է փորձենք կազմակերպել մեր բուհում կատարվող առաջիկա գործընթացները:

Համալսարանի վերափոխվելով՝ փոփոխվում են նաև այն ուղղությունները, որոնք նախկինում գերակա էին մեր բուհի պատմության ողջ ըբթացքում: Ասվածը ենթադրում է, որ վերափոխվում են նաև այն տեսլականն ու առաքելությունները, որոնք ընկած են ամեն մի բուհի հայեցակարգի և, դրանով պայմանավորված, գործունեության հիմքում:

Այն ժամանակահատվածը, որում մենք ծավալել ենք մեր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որ կատարվում է բուհում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Ասվածը վերաբերում է և բուհի սուվերենությանը, և կառավարմանը, և ուսանողակենտրոն ուսուցմանը, և որակի ապահովմանը, և գիտական գործունեությանն ու այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են

համալսարանում, և որոնք բոլորը միասին ուրվագծում են տեսլականից իրականին տանող ճանապարհը:

Մեր համալսարանն ունի մարդկային և մտավոր այն ռեսուրսները, որոնց ժիշտիրացումով կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ ողջ կոլեկտիվով կհաղթահարենք այս շրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, այն է՝ հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2014 թ. կրթական գործընթաց է կազմակերպվել 26, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 24 կրթական ծրագրերով: Ընդհանուր առմամբ ներդրված է բակալավրի 28 և մագիստրատուրայի 13 մասնագիտական կրթական ծրագիր:

Բակալավրի կրթական ծրագիր (առկա, հեռակա)

031000.62.1	Հայոց լեզու և գրականություն
032400.62.1	Ռուսաց լեզու և գրականություն
031300.62.1	Անգլերեն լեզու և գրականություն
03060062	Լրագրություն
032300.62	Թարգմանչական գործ
051000.62	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)
051000.62	Մանկավարժություն և մեթոդիկա (նախադպրոցական կրթություն)
051000.62	Մանկավարժություն և հոգեբանություն
051300.62	Սոցիալական մանկավարժություն
053400.62	Մանկավարժություն և սոցիոլոգիա
050800.62	Կերպարվեստ և գծագրություն
050700.62	Երաժշտական կրթություն
030400.62.1	Պատմություն
030500.62.1	Իրավագիտություն
020400.62.1	Աշխարհագրություն
080200.62	Կառավարում
071700.62	Սոցիալ-մշակութային գործունեություն
040100.62	Սոցիալական աշխատանք
010100.62.1	Մաթեմատիկա
050200.62	Ինֆորմատիկա (տեղեկաբանություն)
010500.62	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
01060062.1	Ֆիզիկա
050600.62	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն
020200.62.1	Կենսաբանություն
020100.62.1	Քիմիա
021000.62	Դեղագործական քիմիա

020800.62	Բնապահպանություն և բնօգտագործում
032100.62.1	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Մագիստրոսի կրթական ծրագիր

010100.68.1	Մաթեմատիկա
050200.68	Ինֆորմատիկա (տեղեկաբանություն)
01060068.1	Ֆիզիկա
031000.68.1	Հայոց լեզու և գրականություն
031300.68.1	Անգլերեն լեզու և գրականություն
032400.68.1	Ռուսաց լեզու և գրականություն
030400.68.1	Պատմություն
080200.68	Կրթության կառավարում
032000.68	Հանրային կառավարում
051000.68	Մանկավարժություն և հոգեբանություն
050100.68	Կրթության կազմակերպում
020100.68.1	Կենսաբանություն
020100.68.1	Քիմիա

2014 թ.-ին մինչև համալսարանի կարգավիճակ ստանալը կրթական գործընթաց էր կազմակերպվում ոչ մանկավարժական 9 մասնագիտական կրթական ծրագրերով, որից 2-ը՝ «Հանրային կառավարում» և «Կրթության կառավարում» մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերով: Համալսարանական կրթական ծրագրեր են.

Բակալավրի կրթական ծրագիր

03060062	Լրագրություն
071700.62	Սոցիալ-մշակութային գործունեություն
080200.62	Կառավարում
010500.62	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
021000.62	Դեղագործական քիմիա
020800.62	Բնապահպանություն և բնօգտագործում
040100.62	Սոցիալական աշխատանք

Մագիստրոսի կրթական ծրագիր

032000.68	Հանրային կառավարում
080200.68	Կրթության կառավարում

Սկսված է կրթական ծրագրերի համալսարանականացման գործընթացը: Առաջին փուլի համար կազմվել է ժամանակացույց: Ֆակուլտետային խորհուրդներում քննարկվել և հաստատման են նախապատրաստվել համալսարանական 13 ծրագրեր՝

031000.62	Հայոց լեզու և գրականություն
032400.62	Ռուսաց լեզու և գրականություն
031300.62	Անգլերեն լեզու և գրականություն
03060062	Լրագրություն
032300.62	Թարգմանչական գործ
010100.62	Մաթեմատիկա
010400.62	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
011000.62	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
020200.62	Կենսաբանություն
021000.62	Դեղագործական քիմիա
100100.62	Սերվիս
030500.62	Իրավագիտություն
080200.68	Կրթության կառավարում

ՎՊՀ-ն 2010-2015 թթ. զարգացման հայեցակարգը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի արդիականացման խնդիր էր դրել, իսկ 2014 թ. գործունեության պլանի «Կրթության գործունեության զարգացման ռազմավարությունը» խնդիրն ավելի էր մասնավորել՝ կրթական ծրագրերի համալսարանականացման գործընթացի առաջին փուլի ռազմավարության մշակում, համալսարանական կրթական ծրագրերի ստեղծման փորձ, ներդրված կրթական ծրագրերի բարելավում:

Կրթական նոր ծրագրերի մշակման ընթացքում բավականին մեծ տեղ է հատկացվել կամընտրական դասընթացների տեսակարար կշռի մեծացմանը: Այսօր դեռևս դժվար է գործող

կրթական համակարգում ամբողջությամբ, բովանդակային անխաթարությամբ կազմակերպել ուսանողակենտրոն ուսուցում:

Բարեփոխումների բաժնի կողմից մշակվում են ոչ միայն կամընտրական դասընթացների ընտրության, այլ նաև համարուսական դասընթացների դասավանդողների ընտրության կարգերը: Վերջիններս ենթադրում են առարկայի ուսումնական փաթեթների (ԱՌԻՓ) ուսումնասիրման և փորձաքարական դասախոսությունների ունկնդրման միջոցով դասընթացի և դասավանդողի ընտրություն: Այս մոտեցումն անպայմանորեն կհանգեցնի որոշակի դժվարությունների, սակայն խթանիչ կլինի դասավանդման և ուսումնառության նոր տեխնոլոգիաների ներդրման համար՝ նպաստելով ուսանողակենտրոն ուսուցման դիրքորոշմանը: «Դասախոսն ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկների «Առաջարկներ» բաժնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսումնառողը պահանջում է նոր տեխնոլոգիաներով դասավանդում:

Ռազմավարական ծրագրից են բխել նաև դասընթացների փորձաքարական բաղադրիչները, դրվածքի բարելավման և մատուցվող կրթական ծառայությունների որակի բամակողմանի մոնիտորինգի խնդիրները:

Ուսումնառողների կարծիքի հաշվառմամբ հաստատման պատրաստ ուսումնական պլաններում փոխվել է նաև դասախոսության/սեմինար, գործնական, լաբորատոր աշխատանք դասաժամերի հարաբերակցությունը՝ հոգուտ գործնական պարապմունքների:

Շատ ավելի էական փոփոխություններ են կատարվել մագիստրոսական ծրագրերի ուսումնական պլաններում. գիտահետազոտական կրթամասին տրվել է 48 կրեդիտ (40%), կամընտրական դասընթացների տեսակարար կշիռը ևս հասցվել է 40%-ի: Հստակեցվել է «Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական թեզի թեմայով» մասը. մագիստրոսից պահանջվելու է շոշափելի արդյունք: IV կիսամյակում

մագիստրանտները կատարելու են միայն հետազոտական աշխատանք և ունենալու են պրակտիկաներ:

Բուհի ուսումնական գործընթացները գնահատելու նպատակով կազմակերպված հարցումը բազմաշերտ է եղել և բավականին մեծ հնարավորություն տվել կրթական տարբեր բաղադրիչներից բավարարվածության աստիճանի դիտարկման համար: Այն ընդգրկել է տեսական դասընթացների, նրա բաղադրիչներին, դասընթացի մատչելիությանը և որակին, պրակտիկաների կազմակերպման ձևին և որակին, վերահսկողությանը, մասնագիտական հմտությունների ձեռք բերմանը, կուրսային, ավարտական աշխատանքներին, անհատական խորհրդատվություններին առնչվող հարցեր: Դուրս չեն մնացել դասավանդման մեթոդների, գրադարանի, ընթերցասարահի աշխատակիցների, լաբորատորիաների հագեցվածության, քննությունների կազմակերպման, դասախոսների անձնական որակի և այլ հարցեր:

Ստորև ներկայացնում ենք դասավանդման և ուսումնառության՝ մեծ հետաքրքրություն ներկայացնող որոշ արդյունքներ: Հարցումը կատարվել է 10 միավորանոց սանդղակով:

Աղյուսակ 1. Ուսանողների հարցման արդյունքները

<i>հ/հ</i>	<i>Հարցի ձևակերպումը</i>	<i>1-3 միավոր գնահատականի %-ը</i>	<i>7-8 միավոր գնահատականի %-ը</i>
1.	Մասնագիտական առարկայի բովանդակնությունը	3.3	63.4
2.	Մասնագիտական առարկայի մատչելիությունը	2.7	74.8
3.	Հումանիտար առարկայի բովանդակնությունը	3.9	61.7
4.	Հումանիտար առարկայի մատչելիությունը	7.2	68.2
5.	Դասախոսների ընդհանուր որակը	4.3	74.4
6.	Մեմինար, գործնական	4.5	67.6

	պարապմունքների ընդհանուր որակը		
7.	Պրակտիկաների ընդհանուր որակը	8.3	63.9
8.	Պրակտիկաների ներդրումը մասնագիտական հմտության ձեռքբերման գործում	4.8	68.1
9.	Կուրսային աշխատանքների ղեկավարման որակը	4.7	62.3
10.	Ավարտական աշխատանքների կազմակերպման կարգը	4.5	60
11.	Ավարտական աշխատանքի ղեկավարման որակը	4.9	61.6
12.	Օգնություն դասախոսից ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և կատարման գործնական	7.7	67
13.	Դասախոսի արտալսարանային աշխատանքը ուսանողի հետ	17.2	53.9
14.	Դասավանդման ընդհանուր ոճը	7.4	65
15.	Դասախոսության վարման հիմնական մեթոդները	9.5	61.2
16.	Գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքների վարման հիմնական մեթոդները	8	61.3
17.	Ուսումնամեթոդական նյութերի մատչելիություն	8	64.3
18.	Գրադարանի հազեցվածությունը անհրաժեշտ գրականությամբ	18.4	55.2
19.	Ընթերցասրահի հազեցվածությունը անհրաժեշտ գրականությամբ	16.4	53.1
20.	Համակարգչային կենտրոնի հազեցվածությունը	7.3	64.8
21.	Լաբորատորիայի հազեցվածությունը	13.8	50.8
22.	Գիտական կաբինետի հազեցվածությունը	5.9	59.9
23.	Ընդհանուր մասնագիտական կաբինետների հազեցվածությունը	7.9	57.2
24.	Ընդհանուր տեխնիկայի հազեցվածությունը	6.2	66.4

Աղյուսակից երևում է, որ դասավանդման որակից բավարարվածության աստիճանն ընդունելի է (60%-74%), սակայն մեթոդների առումով իսկապես անելիքներ կան (երկու հարցումներ չեն հակասում միմյանց). թեպետ այստեղ էլ ունենք բավարարվածության ընդունելի մակարդակ (61.2%-64.3%), սակայն 1-3 միավոր գնահատականների արժանացածների տոկոսն է բարձրացել (8-9.5), մինչդեռ առաջին փնջում հիմնականում տատանվում է 4-5%-ի սահմաններում:

Կատարված բազմաշերտ սոցիալաբանական հարցումից երևում է, որ ուսանողին չի բավարարում արտալսարանային աշխատանքների մակարդակը (17.2 %): Մյուս մտահոգիչ խնդիրը ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածության աստիճանն է: Գրադարանը, կաբինետները և լաբորատորիաները վերազինման կարիք ունեն: Բյուջեն պետք է այս խնդիրը հաշվի առնի:

Հարցումն ընդգրկել է նաև ստուգման ձևերի որակի շուրջ հարցեր (ընթացիկ, ամփոփիչ, ստուգարք). բավարարվածության մակարդակը տատանվում է 61.7%-71.9%-ի սահմաններում:

Աղյուսակ 2. Ուսանողների հարցման արդյունքները քննությունների կազմակերպման վերաբերյալ

<i>h/h</i>	<i>Հարցի ձևակերպումը</i>	<i>1-3 միավոր գնահատականի %</i>	<i>7-10 միավոր գնահատականի %</i>
1.	Միջանկյալ քննությունների անցկացման որակը	7,8	67,1
2.	Քննությունների անցկացման որակը	7,7	71,9
3.	Ստուգարքների անցկացման որակը	7,3	70,1

*Աղյուսակ 3. Ուսանողների հարցման արդյունքները
դասախոսների անձնային որակների վերաբերյալ
(100 միավորանոց սանդղակով)*

հ/հ	Հարցի ձևակերպումը	0-25 %	75-100 %
1.	Աուդիտի իմացություն	3.9	31.4
2.	Նյութի մատուցման մատչելի ոճ	6	17.2
3.	Հղկված խոսք	6	20.5
4.	Խոսքի հարմար տեմպ՝ նշումներ կատարելու համար	7.6	19.8
5.	Անմիջական շփում լսարանի հետ, լսարանի ակտիվացում	5.4	30
6.	Արձագանք լսարանի հարցադրումներին	4.3	31.4
7.	Ինքնուրույն մտածելու, քննադատելու, ինքնաքննադատելու, վերլուծության դրսևորում	7.6	26.7
8.	Օբյեկտիվություն, արդարություն	14.5	19.6
9.	Ուսուցման տարբեր եղանակների և հնարների կիրառում	10.7	18.4
10.	Հետաքրքրության սերմանում առարկայի նկատմամբ	7.4	30
11.	Խորհրդատվության ստացման հնարավորություն	19.3	24.4

Հարցերի այս խմբում կառանձնացվի և հստակ ուսումնասիրության կենթարկվի հատկապես օբյեկտիվության ինդիքը. ցածր (14.5%) օբյեկտիվությունը ռիսկային է: Ամբիոնները և ուսումնական այլ ստորաբաժանումները մեծ անելիք ունեն: Հարկ կլինի գտնել ստուգումների գնահատման այնպիսի ձևեր, որոնք կիջեցնեն ոչ օբյեկտիվության նիշը:

Բավարարվածության աստիճանի վերհանման հարցում ուսանողներին ազատ, չկաշկանդված լինելու ավելի և ավելի մեծ հնարավորություն է տրվել:

Խիստ կարևոր է, որ մասնագիտական գործունեության իրեն պատրաստ չի համարում միայն 1,4%-ը: Հարցվողների 76%-ը

համոզված է, որ ինքը ընկերներին և ծանոթներին խորհուրդ կտա ընտրել նույն մասնագիտությունը:

Մա ևս դրական ցուցանիշ է: Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգում այդ խնդիրը ճկուն ձևով լուծվում է:

Դասընթացի առարկայական ծրագրերի փաթեթի ստեղծումն այսօր խիստ արդիական է հնչում: Դեռևս 2008-ից մշակվել և ներդրվել են ԱՌԻՓ-ներ, որոնք անընդհատ կատարելագործվում են և հիմնականում բավարարում պահանջվող մակարդակը: Ռեկտորատի կողմից որոշում է ընդունվել և ամբիոններին համապատասխան ցուցում է տրվել դրանք տեղադրել կայքում, որպեսզի ուսանողը նախապես ըստ ամենայնի ծանոթանա դասավանդվելիք առարկային, դասախոսությունների, գործնական, սեմինար, լաբորատոր, ինքնուրույն աշխատանքներին, գնահատման ձևերին, հարցաշարերին և այլն: 2014 թ. հաստատված «ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգի» մեջ առարկաների ուսումնամեթոդական փաթեթների ստեղծման և բարելավման համար արտալսարանային ժամեր են հատկացվել դասախոսների մոտիվացիան բարձրացնելու համար: Նշենք, որ կայքում ԱՌԻՓ-ների տեղադրումը նաև ռիսկային է, սակայն այն շատ ավելի է բարձրացնում դասավանդողի պատասխանատվությունն այդ կարևոր ուսումնամեթոդական փաստաթղթի ստեղծման համար:

Բարեփոխումների բաժնի կողմից մշակվում է «Գիտելիքի գնահատման չափորոշիչը»: Գործողության մեջ դնելու արդյունքում առարկաների ուսումնամեթոդական փաթեթներում փոփոխություն անելու անհրաժեշտություն կառաջանա: Յուրաքանչյուր դասընթացի համար դասախոսի կողմից կընտրվի գործիքակազմ և մեթոդ:

Հիմնական ուսանողական համակազմ: Պայմանավորված ժողովրդագրական տեղաշարժերով և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով՝ 2014 թ.-ին ևս արձանագրվել է ուսանողների համակազմի թվի անկում: Երևույթն ընդհանրական է, այն ներառում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը, ուսուցման կազմակերպման առկա և հեռակա համակարգերը:

Աղյուսակ 4. Ուսանողական համակազմի դինամիկան

<i>Ուս. թիվը առ</i>	<i>Ընդամենը</i>	<i>Առկա ուսուցում</i>	<i>Հեռակա ուսուցում</i>	<i>Բակալավրի կրթական ծրագիր</i>	<i>Մագիստրոսի կրթական ծրագիր</i>
01.01.2014թ.	3059	1437	1622	2765	294
01.12.2014թ.	2833	1351	1482	2557	276
Թվի անկման տոկոսը	7,4%	6%	8,7%	7,6%	6,2%

Ինչպես երևում է աղյուսակից, ամենամեծ անկումը նկատվում է հեռակա ուսուցման համակարգում: Նշված ժամանակահատվածում հեռակա ուսուցման համակարգից ուսանողների համակազմի նվազման պատկերն այսպիսին է.

Աղյուսակ 5. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողական համակազմի նվազումը.

<i>Ուսանողների թվաքանակի նվազման պատճառը</i>	<i>Ուսանողների թվաքանակը</i>
Ակադեմիական ցածր առաջադիմություն	34
Անհարգելի բացակայություն	28
Պայմանագրային պարտականությունների չկատարում	10
Զինվորական ծառայության մեկնում	24
Ուսումնառության ընդհատում /տարկետում/	17
Բուհից ազատում իր դիմումի համաձայն	12

Անկման թվի մեծությունը պայմանավորված է ոչ միայն վերաբերյալով, այլև շրջանավարտների և նոր ընդունվողների քանակի զգալի տարբերությամբ. ավարտական կուրսում սովորել է 382 ուսանող, տվել ենք 258 շրջանավարտ (124 ուսանող ազատվել է ինստիտուտից), նույն համակարգ է ընդունվել 255 ուսանող:

Բակալավրի կրթական ծրագրով առկա, հեռակա ուսանողների թիվն ըստ կուրսերի այսպիսին է (առ 01.12.14).

Աղյուսակ 6. Բակալավրի կրթական ծրագրով առկա, հեռակա ուսանողների թիվն ըստ կուրսերի

<i>Առկա ուս. համակարգ</i>	<i>Անկումը 2014 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ</i>	<i>Հեռակա ուս. համակարգ</i>	<i>Անկումը 2014 թ.-ի դեկտեմբերի 11-դրությամբ</i>
341	-	255	-
328	6.1%	200	4,4%
379	6.7%	339	10,4%
52	13.4%	329	-0,7%
		337	-5,3%

Անկման և աճի ցուցանիշները համեմատելով նկատում ենք, որ կա դեպի բուհ վերադարձի միտում. տարբեր պատճառներով ուսումն ընդհատած ուսանողն այնուամենայնիվ վերադառնում է ուսումը շարունակելու նպատակով: 2-րդ կուրսի թվաքանակի անկումն ամենամեծն է. վերջինս պայմանավորված է զինվորական ծառայության մեկնողների տեղաշարժով: Առկա ուսուցման համակարգից նույն երևույթը չի դիտվում: Ցավոք, ծառայության մեկնած ուսանողները ուսումը շարունակում են հիմնականում հեռակա ուսուցման համակարգում: Այսպես, 2014 թ.-ին զինվորական ծառայությունից առկա ուսուցման համակարգ է վերադարձել 53 ուսանող, մինչդեռ 2011, 2012 թթ. ծառայության է մեկնել 98 ուսանող:

Մա խիստ մտահոգիչ է: Առկա ուսուցման համակարգում արական սեռի ներկայացուցիչների քանակի նվազումը վտանգավոր է:


Այսօր աշխատաշուկան չի հստակեցրել իր պահանջները բակալավրի, մագիստրոսի որակավորում ունեցողների նկատմամբ:

Այսօր մագիստրատուրայում սովորողների միայն 8,6%-ն է արական սեռի:

Տարիներ շարունակ բուհի ուսանողական համակազմը համալրվել է Վանաձորի և Լոռու տարածաշրջանի շրջանավարտներով: Օրինաչափությունը չի խախտված:

Աղյուսակ 7. Ուսանողների թվաքանակն ըստ բնակավայրի

<i>Մարզեր</i>	<i>Ուսանողների թվաքանակ</i>	<i>%</i>
Լոռու մարզ	2608	92,06
Արագածոտնի մարզ	44	1,55
Տավուշի մարզ	90	3,18
Կոտայքի մարզ	2	0,07
Գեղարքունիքի մարզ	9	0,32
Շիրակի մարզ	5	0,18
Սյունիքի մարզ		0,00
Վայոց Ձորի մարզ	4	0,14
Արարատի մարզ	6	0,21
Արմավիրի մարզ	18	0,64
Երևան	12	0,42
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	5	0,18
Ռուսաստանի Դաշնություն	4	0,14
Վրաստանի Հանրապետություն	25	0,88
Հունաստան	1	0,04
Ընդամենը	2833	100



Նկար 1. Մագիստրոսի կրթական ծրագրի առաջին կուրս ընդունված գերազանց գնահատական ունեցող ուսանողների թվաքանակի նվազումը ըստ ուստարիների

Առաջադիմություն. Համալսարանի զարգացման հայեցակարգի կարևորագույն ուղղություններից է կրթության որակի ապահովումը: Ուսանողի առաջադիմությունը որակի ցուցիչներից մեկն է:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի արհեստավարժության, դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ համակցումը և նորարարական մոտեցումներն են, որ կարող են ձևավորել շուկայի պահանջները բավարարող մասնագետ:

Գնահատման գործող համակարգը հնարավորություն է տալիս ուսանողին ճիշտ օգտագործել ժամանակը և բաշխել ուժերը: Ընթացիկ քննությունների արդյունքով զարնանային քննաշրջանը ժամանակից շուտ ամփոփել է առկա ուսուցման համակարգի ուսանողության 90%-ը: 2013-14 ուսումնական տարվա զարնանային քննաշրջանի ժամանակ 2483 ուսանող-քննության է եղել, հանրագումարային քննություն հանձնելու 244

ուսանող-քննություն է արձանագրվել: Ըստ ֆակուլտետների պատկերն այսպիսին է.

Աղյուսակ 8. Ուսանողների թվաքանակն ըստ ֆակուլտետների.

Ֆակուլտետը	Ուսանողների ընդհանուր թիվը	Հանրագումարային քննությանը մասնակցած ուսանողների	
		թիվը	տոկոսը
Ֆիզիկամաթեմատիկական	274	37	13.5
Մանկավարժության	796	49	6.1
Բանասիրական	635	71	11.1
Պատմաշխարհագրական	576	76	13.1
Կենսաբանաքիմիական	202	14	6.9

Արդյունքում ամառային և ձմեռային արձակուրդներին հավելվում է 2-3 շաբաթ, կամ էլ ընթացիկ քննություններ չունեցող դասընթացների քննության համար ուսանողը ստանում է շատ ավելի մեծ ժամանակահատվածում նախապատրաստվելու հնարավորություն:

2014 թ. գարնանային քննաշրջանի ընթացքում 1-3-րդ կուրսերի ուսանողների (ավարտական կուրսերի քննությունների արդյունքներն ամփոփվել են ավելի վաղ) 88%-ը ակադեմիական պարտք չի ունեցել. ցուցանիշը 2013 թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ բարելավվել է 3%-ով: Բարելավվել է (թեկուզև շատ չնչին տոկոսով) նաև միայն «գերազանց», «գերազանց և լավ», «խառը» գնահատականներով սովորողների թիվը:

Աղյուսակ 9. Ուսանողների առաջադիմությունը.

Ուսանական տարի	Հանձնել են բոլոր քննությունները		Միայն «5» գնահատականներ		«5» և «4» գնահատականներ		Միայն «3» գնահատականներ		Խառը գնահատականներ	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
2012-2013	720	85	124	17.2	212	29.4	83	11.5	301	41
2013-2014	720	85	120	17.3	214	30.9	80	11.5	277	40

Նույն՝ 11.5%-ը, պահպանվել է միայն բավարար գնահատական ստացողների մոտ: Մեր խնդիրը պետք է լինի միայն բավարար գնահատականներով սովորող ուսանողների ուսման նկատմամբ վերաբերմունքը փոխել և անհատական-խորհրդատվական աշխատանքների, ինքնուրույն աշխատանքների կատարման, ունակությունների զարգացման, մոտիվացիայի փոփոխության համալիր միջոցառումներով հասնել դրական արդյունքի:

2014 թ. գարնանային քննաշրջանին իջել է նաև անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը. 2013 թ. 10.6%-ի փոխարեն ունենք 8.7% արդյունք:

Ցավոք, նույնը չենք կարող ասել հեռակա ուսուցման համակարգի ուսանողության մասին: Այստեղ առաջադիմության խիստ անկում է նկատվել՝ 20%:

Առաջադիմությունը չի իջել միայն «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն», «Ֆիզիկա» մասնագիտությունների ուսանողության շրջանում:

Աղյուսակ 10. Ուսանողների առաջադիմությունը.

Ուսումնական տարի	Հանձնել են բոլոր քննությունները		Միայն «5» գնահատականներ		«5» և «4» գնահատականներ		միայն «3» գնահատականներ		խառը գնահատականներ	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
2012-2013	787	73.3	53	6.7	97	9	450	57.1	187	23.8
2013-2014	633	53.1	31	6.9	99	15.6	336	53.1	167	26.4

Հանրապետության որոշ բուհերում ընթացիկ քննությունների կազմակերպման ձևը ներդրված է նաև հեռակա ուսուցման համակարգում:

Հարկավոր է քննաշրջանների կարճ ժամանակահատվածում բարեփոխումներ կատարել հեռակա ուսուցման կազմակերպման

համակարգում՝ մշակելով և ներդնելով կրթական նոր տեխնոլոգիաներ: Առաջադիմության անկման ցանկացած համընդհանրական իրողություն պետք է քննարկվի, վերլուծվի, ախտորոշվի: Այս տեսակետից մեծ անելիքներ ունեն ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդները, ամբիոնները: Բարեփոխումների բաժինն արդեն ձեռնարկել է հարցի խոր ուսումնասիրման գործընթացը, կմշակվեն ցուցումներ, և 2015-2016 ուստարում ներդրվելիք ուսումնական պլանները կկազմվեն նոր մոտեցմամբ:

Մագիստրատուրայի ընդունելության ժամանակավոր կարգի մեջ 2012 թ. փոփոխություն մտցվեց. իջեցվեց միջին որակական գնահատականի շեմը: Այն ոչ խիստ զգալի է (ընդամենը 0.9%), երբ դիտարկում ենք ամբողջի մեջ, ակայն խիստ վտանգավոր ազդեցություն է ունեցել առաջին կուրսի ուսանողության առաջադիմության վրա: Եթե 2012-13 ուսումնական տարում առաջին կուրսի մագիստրոսների 68%-ն է սովորել միայն գերազանց գնահատականներով, ապա 2013-14 ուստարում այն իջել է 30.9%-ի:

Ավարտական որակավորման քննությունների արդյունքները ևս չեն փոխում ընդհանուր պատկերը. նորից նկատվում է առաջադիմության 3%-ի անկում (առկա ուսուցման համակարգ), թեպետ 1%-ով աճել է գերազանցության դիպլոմով ավարտածների թիվը:

Օրինաչափություն է նկատվում նաև որակավորման քննությունները միայն գերազանց գնահատականներ ստացած ուսանողների թվի աճի առումով: Եթե 2013 թ. միայն 31.2%-ն էր քննությունները հանձնել գերազանց առաջադիմությամբ, ապա 2014-ին այն կազմում է 38.4%: Վիճակն ավելի հուսադրող է, երբ հարցը քննարկում ենք «գերազանց» և «գերազանց ու լավ» գնահատականներով բուհը ավարտողների շրջանակում. 2014-ին այն կազմել է 60,7% (2013-ի 54,6%-ի փոխարեն): Ցուցանիշը վկայում է, որ աշխատաշուկա են մուտք գործում բավականին լավ պատրաստվածությամբ շրջանավարտներ:

Աղյուսակ 11. Ուսանողների առաջադիմությունը.

Ուսումնական տարի	Հանձնել են բոլոր քննությունները		Միայն «5» գնահատականներ		«5» և «4» գնահատականներ		միայն «3» գնահատականներ		խառը գնահատականներ	
	թիվը	%	թիվը	%	թիվը		թիվը	%	թիվը	%
2012-2013	127	94	92	72,4	25	19.6	1	0.8	9	7
2013-2014	113	89.7	39	34,5	40	35.4	4	3.5	30	26.6

Մագիստրատուրայի շրջանավարտների շրջանում այդ ցուցանիշը միանգամայն գոհացուցիչ է. 2014 թ. մագիստրոսական թեզերը «գերազանց» գնահատականով պաշտպանել է 105 (81.3%) մագիստրանտ, «բավարար» է գնահատվել ընդամենը 5 (3.7%) աշխատանք:

Աղյուսակ 12. Ուսանողների առաջադիմությունը /ամփոփիչ ատեստավորման քննություններ/

Ուսումնական տարի	Հանձնել են ամփոփիչ ատեստավորման քննությունները		«5» գնահատական		«4» գնահատական		«3» գնահատական	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
2012-2013	135	100	65	48.2	67	49.6	3	2.2
2013-2014	129	100	105	81.3	19	14.7	5	3.7

Համեմատելով կարող ենք նկատել, որ 2014թ. մագիստրոսական կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները ավելի բարձր են եղել:

Ուսանողական նպաստի տրամադրում: Ուսման վճարի լրիվ փոխհատուցման գործընթացը (փոխատեղում) կազմակերպվել է առկա ուսուցման համակարգում ուսանողների գիտելիքների,

հմտությունների և կարողությունների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառմամբ: Անվճար համակարգում սովորելու իրավունք են ստացել բակալավրի կրթական ծրագրով 2-4-րդ և մագիստրոսական կրթական ծրագրով 2-րդ կուրսերի՝ թվով 145 ուսանողներ: Անվճար սովորելու իրավունքը պահպանել են բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի ուսանողների 48,1%-ը, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների մոտ համապատասխանաբար 82,4% և 85,7%-ը:

Ակնառու է բարձր կուրսեցիների ավելի լուրջ և սթափ վերաբերմունքը կրթության նկատմամբ: Բացի դրանից՝ Համալսարանում համակարգվել է ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվության կազմակերպման, էլեկտրոնային կրթական նյութերի տրամադրման գործընթացը: Փոխատեղման արդյունքում ձևավորված մրցակցային դաշտը նպաստում է կրթության որակի բարձրացմանը՝ մասնավորապես պայմանավորված այդ դաշտում առկա թափանցիկությամբ:

Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է օրենքով նախատեսված սոցիալական խմբերին՝ թվով 18 ուսանողների:

Աղյուսակ 13. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակը.

Խ/Խ	Կարգավիճակը	Ուսանողների թվաքանակը			Ընդամենը
		Բակալավրի կրթական աստիճան (առկա ուսուցման համակարգ)	Բակալավրի կրթական աստիճան (հեռակա ուսուցման համակարգ)	Մագիստրոսի կրթական աստիճան (առկա ուսուցման համակարգ)	
1.	Զոհված զինծառայողի երեխա-ուսանող	1	5	2	8
2.	1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ, մանկուց հաշմանդամ - ուսանող	0	5	2	7

3.	Ծնողական խնամքից զրկված ուսանող երեխաներ	1	1	0	2
4.	Երկկողմանի ծնողագուրկ	1	0	0	1
Ընդամենը		3	11	4	18

Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում են ստացել սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող (ՄՈԳ-ի հաշվառմամբ) թվով 82 ուսանողներ:

Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին առկա և հեռակա ուսուցման համակարգերի վճարովի չափաքանակի շրջանակներում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության հաշվառմամբ՝ մրցութային կարգով, հատկացվել է ուսման վճարի մասնակի փոխհատուցում: Ուսանողական նպաստների համակարգում ընդգրկված 196 ուսանողից 59 ուսանող (30.1 % նախորդ տարվա 33.2 %-ի փոխարեն) սոցիալապես անապահով և ծնողագուրկ ուսանողներ են, իսկ 23 ուսանող՝ (11,7% նախկին 8,5 %-ի փոխարեն) գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողներ:

Համալսարանի համագործակցում է «Վիվա Սել» ՄՏՍ կազմակերպության հետ, որի հովանավորության ներքո 42 ուսանող ստանում են ուսման վճարի լրիվ փոխհատուցում:

Համալսարան ԱՄՔՈՐ (Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպություն «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագիր») համագործակցության արդյունքում հաշվետու տարում ուսման վճարի մասնակի փոխհատուցում են ստացել 13 ուսանող:

Կրթաթոշակ: 2014 թ. գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարք դրսևորելու համար կիսամյակի կտրվածքով կրթաթոշակ է տրվել 193

ուսանողի, որից 76 ուսանող (39,4%)՝ գերազանցության: Հարկ է նշել, որ բարձրացել է ուսանողների առաջադիմությունը՝ համաձայն կրթական ծրագրերից ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Բացի պետական կրթաթոշակից՝ 11 ուսանողի հատկացվել են Համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սովորող ուսանողների համար սահմանված են տարբեր անվանական կրթաթոշակների անվանակարգեր¹:

Ժամաքանակ և դասախոսական համակազմ: Վերջին տարիներին, պայմանավորված ուսանողական համակազմի թվաքանակի նվազմամբ, ինչպես նաև նոր ուսումնական պլանների ներդրմամբ (լսարանային ժամաքանակը, համաձայն արդի պահանջների, իջեցված է հոգուտ ինքնուրույն աշխատանքի ծավալի մեծացման), նվազել է ուսումնական գործընթացի համար օգտագործվող ժամաքանակը.

Աղյուսակ 14. Օգտագործված ժամաքանակն ըստ տարիների

<i>Ուսումնական տարի</i>	<i>Օգտագործվող ժամաքանակ</i>
2010-2011	215739
2011-2012	184507
2012-2013	198974
2013-2014	180978,5
2014-2015	181974,05

¹ Բակալավրի կրթական ծրագիր՝ Հրանտ Մաթևոսյանի անվան, Ժորա Հախինյանի անվան, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի, ռեկտորի, Արհմիության, Քաղաքապետարանի ավագանու կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ:

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ Խաչատուր Աբովյանի, պրոֆ. Վարազ Առաքելյանի, Մովսես Խորենացու, Լևոն Օրբելու, Մերգեյ Մերգելյանի անվան «Երիտասարդ հետազոտող» անվանական կրթաթոշակներ:

Ժամաքանակի փոփոխություն (ավելացում կամ նվազում) կատարվել է բոլոր ամբիոնների ժամաքանակների մեջ:

Ընդհանուր ժամաքանակը 2013 թ. համեմատությամբ աճել է շուրջ 955 ժամով, իսկ լսարանային ժամերը նվազել են 12511-ով:
Աղյուսակ 15. Օգտագործված ժամաքանակն ըստ ամբիոնների

h/h	Ամբիոնի անվանումը	Ընդհանուր ժամաքանակ		Տարբերություն
		2013-2014	2014-2015	
1.	Օտար լեզուների	17892,35	17795,7	-96,65
2.	Ռուսաց լեզվի	8714,7	9969,15	1254,45
3.	Հայոց լեզվի	10109,55	10135,05	25,5
4.	Գրականության	12823,4	13203,8	380,4
5.	Մանկավարժության	15208,2	12445,85	-2762,35
6.	Հնգերանության	13858,25	16373,65	2515,4
7.	Արվեստի	7835,95	6061,7	-1774,25
8.	Փիլիսոփայության	10650,7	12068,75	1418,05
9.	Պատմության	11169,55	10178,15	-991,4
10.	Տնտեսագիտության	11001,3	12962,75	1961,45
11.	Բուսաբանության և աշխարհագրության	9631,1	8363,5	-1267,6
12.	Ֆ/դ տեսության և մեթոդիկայի	4223,4	4067,3	-156,1
13.	Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության	7903,7	7254,6	-649,1
14.	Կենդանաբանության և ֆիզիոլոգիայի	5895,3	7089,45	1194,15
15.	Քիմիայի	6958,35	8014,85	1056,5
16.	Մաթեմատիկական անալիզի	4924,7	5412,8	488,1
17.	Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի	5884,5	5854,75	-29,75
18.	Ֆիզիկայի	6413,7	5182,75	-1230,95
19.	Ինֆորմ., տնտ. մեթոդ. և մոդել.	9879,8	9539,5	-340,3
ԸՆԴԱՄԵՆԸ		180978,5	181974,1	995,55

Այս իրողությունն իր ուղղակի ազդեցությունն ունի պրոֆետրադասախոսական անձնակազմի հաստիքների ձևավորման վրա և ցավոտ խնդիր է:

2014-2015 ուսումնական տարվա ժամաքանակով, ըստ մեր բուհի կողմից սահմանված չափորոշիչների, ամբիոնները կարող էին զբաղեցնել հետևյալ քանակի հաստիքներ.

Աղյուսակ 16. Օգտագործված հաստիքներն ըստ ամբիոնների

<i>h/h</i>	<i>Հաստիք</i>	<i>Ընդամենը</i>	<i>Պրոֆետոր, դոցենտ</i>	<i>Ասիստենտ, դասախոս</i>
1	Մաթ. անալիզի	5,5	2,8	2,6
2	Մաթ. և մաթ. դաս. մեթոդ.	5,15	2,54	2,62
3	Ֆիզիկայի	5,3	2,5	2,8
4	Ինֆորմ., տնտ. մեթոդ. և մոդել.	10,2	3,1	7,1
5	Գրականության	12,9	6,8	6,1
6	Ռուսաց լեզվի	10,7	4,0	6,7
7	Հայոց լեզվի	9,5	4,3	5,2
8	Օտար լեզվի	18,7	6,3	12,4
9	Փիլիսոփայության	11,4	6,7	4,7
10	Տնտեսագիտության	11,80	6,7	5,1
11	Մանկավարժության	10,4	5,8	4,6
12	Հոգեբանության	15,1	8,4	6,7
13	Պատմության	9,1	5,6	3,5
14	Բուսաբ. և աշխարհ.	7,7	4,2	3,4
15	Քիմիայի	7,96	3,92	4,04
16	Ընդհ. ֆիզ. դաստիարակ.	10,1	3,3	6,8
17	Ֆ/դ տեսութ. և մեթոդիկայի	4,1	1,7	2,3
18	Կենդան. և ֆիզիոլոգիայի	7,1	3,6	3,5
19	Արվեստի	6,6	2,3	4,3
Ընդամենը		179,2	84,6	94,6

Ծանոթություն: Արվեստի ամբիոնի հաստիքների թիվը հաշվարկված է «Երաժշտական կրթություն» 1 ուսանողի

մասնագիտության հաշվարկով, իրականում զբաղեցրել են 13.6 հաստիք (ըստ ունեցած ուսանողների թվի):

2014 թ. մայիսի 5-ին հաստատվեց համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը:

Կանոնակարգը բարելավեց նախորդը. ոչ լսարանային ժամեր հատկացվեցին ուսումնամեթոդական աշխատանքների «Դասապատրաստում» բաժնին (նոր ներդրված դասընթացներ, մասնագիտական, համաինստիտուտային դասընթացներ, գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքների նախապատրաստում), փոփոխություններ կատարվեցին նաև ԱՌԻՓ-ների ստեղծման համար. պայմանավորված դասընթացի աշխատատարությամբ, չափման միավորը կրեդիտ, 1 փաթեթի ստեղծման համար հատկացվեց 36 կամ 72 ժամ: Ժամաքանակ հատկացվեց նաև դասախոսական տեսքերի նախապատրաստմանը (1 դասախոսությանը՝ 4-6 ժամ) և խորհրդատուի գործառույթ իրականացնողներին: Նշված քայլերը միտված էին դասախոսի արտալսարանային բեռնվածքը չափելի դարձնելուն, հաստիքներ ձևավորող ընդհանուր ժամաքանակի մեծացումից (մինչև 1050) բխող ցնցումները թուլացնելուն:


2014-15 ուսումնական տարում օգտագործում ենք 186,3 հաստիք, որից՝ 165,8-ը հիմնական անձնակազմի, 20,5 -ը՝ ժամավճարային աշխատողների կողմից (20508 ժամ):

Ըստ զբաղեցրած հաստիքների՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմն ունի հետևյալ համամասնական պատկերը.

Աղյուսակ 17. Պրոֆեսորադասախոսական համակազմն ըստ զբաղեցրած պաշտոնների

Պաշտոնը	Թվաքանակը	%
Պրոֆեսոր	11	4,28
Դոցենտ	96	37,35

Ասիստենտ և դասախոս	150	58,37
Ընդամենը	257	100



Նկար 2. Պրոֆեսորադասախոսական համակազմի ըստ գրադեցրած պաշտոնների

Նախորդ ուսումնական տարվա համեմատ պակաս ենք օգտագործում 34,4 հաստիք:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմից գիտական աստիճանի և կոչում ունի 64,2%-ը:

Աղյուսակ 18. Պրոֆեսորադասախոսական համակազմի ըստ գիտական աստիճանի և կոչումի.

I. Գիտական աստիճանի և կոչում ունեցող դասախոսներ	Թվաքանակ	%
որից՝	165	64,2
գիտությունների դոկտոր	14	5,45
գիտությունների թեկնածու	134	52,14
առանց գիտական աստիճանի դոցենտ	17	6,61
II. Առանց գիտական աստիճանի և կոչումի դասախոսներ	92	35,8
ԸՆԴԱՄԵՆԸ	257	100%

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համապատասխանում է լիցենզավորման և հավատարմագրման գործընթացների ժամանակ ներկայացվող պահանջներին.

գիտական աստիճան և կոչում ունի պրոֆեսորադասախոսական հիմնական աշխատակազմի 75,88 % է (50%-ի պահանջի դեպքում):

Աղյուսակ 19. Պրոֆեսորադասախոսական համակազմ

Պրոֆեսորադասախոսական համակազմ	Թվաքանակ	%
I. Հիմնական հաստիքային անձնակազմ	195	75,88
որից՝		
գիտական աստիճան և/կամ կոչում ունի	153	78,46
առանց գիտական աստիճանի և/կամ կոչումի	42	21,54
II. Ժամավճարային հիմունքով	62	24,12
Ընդամենը	257	%

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական աստիճանի և կոչման ձեռք բերումը ինքնանպատակ չէ. այն ռազմավարական է, և 2014 թ. գործունեության պլանի մեջ ներառված են «մշտադիտարկել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները» քայլի, ինչպես նաև 2010-2015 թթ. ռազմավարական զարգացման պլանի «Կադրային ռազմավարության» բաղադրիչների մեջ:


Ռազմավարական պլանի ուղղորդմամբ այսօր բարելավել են մի շարք ամբիոնների ցուցանիշներ (օտար լեզուների, փիլիսոփայության և քաղաքագիտության): Ձեռքբերում կարող ենք համարել «Իրավագիտություն» մասնագիտության դասավանդողների մեջ երեք գիտական աստիճան ունեցողների փաստը, որից երկուսը մեր բուհի շրջանավարտներն են: Սպասվում է նաև չորրորդ պաշտպանությունը:

Ինչպես նշեցինք, ռազմավարական է ռեսուրսների ապահովման, բարելավման քայլը, որի ենթաքայլերից մեկն էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ոչ միայն միջին տարիքի իջեցումն է, այլ մինչև 30-50 տարեկան գիտական

աստիճան և կոչում ունեցողների խնդիրը: Որոշ ամբիոններում (մաթեմատիկա, քիմիա) գիտական աստիճան և կոչում ունեցողների միջին տարիքը 66 է: Նմանատիպ ամբիոններին հանձնարարական է իջեցվել 2015-16 ուստարում ժամաքանակի մինչև 15%-ը տրամադրել պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները բավարարող երիտասարդ կադրերի և ըստ ամենայնի սատարել գիտահետազոտական գործունեություն ծավալելուն:

Աղյուսակ 20. Պրոֆեսորադասախոսական համակազմն ըստ տարիքի

Պրոֆեսորադասախոսական համակազմի տարիքային սանդղակ	Աշխատողների թվաքանակը	գիտական աստիճան և/կամ կոչում ունի
մինչև 30	28	6
30-40	58	34
40-50	45	32
50-60	50	35
60-70	55	39
70 և ավելի	21	19
Ընդամենը	257	165



Նկար 3. Պրոֆեսորադասախոսական համակազմն ըստ տարիքի

Պայմանավորված ուսանողների թվով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 11.9/նախորդ տարվա 10.8-ի փոխարեն/ է, իսկ ուսանող/հաստիք հարաբերակցությունը՝ 16.4 /նախորդ տարվա 14.2 փոխարեն/: Վերջինս բավականին լավ ցուցանիշ է: Սակայն ընդունված է վարկանիշավորման ժամանակ ընդունել ուսանող/դասախոս հարաբերակցությունը: Այն կարելի է բարելավվել միայն ամբողջական հաստիքով դասախոսներ աշխատանքի հրավիրելու միջոցով: Սակայն ներկա պայմաններում, երբ նոր ներդրվող մասնագիտությունների համար բոլոր դասընթացները չեն դասավանդվում, դա անհնար է, բացի դրանից՝ երկարամյա աշխատանքային փորձ ունեցողները դժվարությամբ են նախապատրաստում և ներդնում դասընթացներ, մինչդեռ դա պրոֆեսորի և դոցենտի գործառույթ է:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 59.5%-ը կանայք են, որոնցից 81-ը (52.9%) ունեն գիտական աստիճան և կոչում:

Աղյուսակ 21. Պրոֆեսորադասախոսական համակազմ

Պրոֆեսորադասախոսական համակազմ	257	100%
Կանայք	153	59,53
որից՝		
գիտական աստիճան աստիճան և/կամ կոչում ունեն	81	52,94

Համալսարանում տարիներ շարունակ տեղի է ունենում վերարտադրություն իր լավագույն շրջանավարտների հաշվին: Բացառություն չի եղել նաև 2014 թ.-ը: Դասախոսական աշխատանքի է հրավիրվել 2 շրջանավարտ:

Նոր մասնագիտությունների ներդրումը իր հետ բերում է բազային լրացուցիչ կրթություն ստացած՝ վերաորակավորում ունեցող մասնագետների կարիք: Այսպես, համալսարանականացումը իր հետ բերեց «Մանկավարժություն» «Հոգեբանություն» գիտաճյուղերի դասաժամերի նվազում, իսկ «Սոցիալական աշխատանք», «Հանրային կառավարում»,

«Կրթության կառավարում» մասնագիտությունները՝ նոր դասընթացներ, հետևաբար նաև՝ ժամեր: Գիտական աստիճան ունեցող երկու մասնագետ և մեկ նախկին շրջանավարտ ձեռք բերեցին նոր որակավորում: Այս գործընթացը շարունակական է լինելու, որովհետև հնարավորություն է տալիս արդեն կայացած, փորձառու դասավանդողին չկորցնել աշխատանքը, իսկ տարիների փորձ և հմտությունները դասավանդման բարձր որակի նախապայմաններ են:

Կրթության գործի կազմակերպողները և որակի պատասխանատուները կշարունակեն կատարելագործել դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը. նմանատիպ պահանջ կա նաև ուսումնառողների կողմից:

Կրթական բարեփոխումներ: Կրթական բարեփոխումների բնագավառի աշխատանքն ուղղված է Համալսարանի ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (կարգեր, կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն) մշակմանը:

Վերոնշյալ ժամանակահատվածում մշակվել են մի շարք փաստաթղթեր.

1. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք՝ 032000 «Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար (տեղադրված է ՎՊՀ կայքում),
2. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք՝ «Կրթության կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար (տեղադրված է ՎՊՀ կայքում),
3. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք՝ 020100 «Քիմիա» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար (տեղադրված է ՎՊՀ կայքում):

4. Հավելված «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և արդյունքների գնահատման մեթոդական ուղեցույց»-ի (էսսե, գործարար խաղեր և այլն):

5. ՎՊՀ-ում իրականացվող և նախապատրաստման փուլում գտնվող բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագրեր:

Ներկայումս գործող «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ը լրամշակվում է, և կազմվում է երկու առանձին կանոնակարգ՝ «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» և «Ուսանողների բալային-ռեյթինգային համակարգով գիտելիքների ստուգման և գնահատման»:

Կատարվում են շարունակական աշխատանքներ՝ Բոլոնիայի գործընթացով պայմանավորված կրթական բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերի որոնման, համակարգման, Համալսարանի տարբեր ստորաբաժանումներին ներկայացնելու ուղղություններով:

2014 թ. իրականացվում է Համալսարանի 2011-14 թթ. գործունեության առանցքային ցուցանիշների գնահատում(ԱՅԳ):

Բուհի զարգացման հայեցակարգի 6-րդ բաժնում նշված են ուսանողի անձի կատարելագործման, քաղաքացու և հայրենասերի, մասնագիտական, ինտելեկտուալ և սոցիալական գործունեության ունակ մասնագետի կայացման, ինչպես նաև անձի սահմանադրական իրավունքների ապահովման խնդիրները:

Սոցիալ-դաստիարակչական զարգացման ռազմավարական խնդիրներից է նաև հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացումը, քաղաքացիական հասունության ձևավորումը. 2014 թ. անելիքների մեջ շեշտվում է վարքային միջավայրի դրական տեղաշարժի ապահովման խնդիրը. նշված և մի շարք այլ

խնդիրներ իրականացվել են նաև ուսանողական խորհրդատվական կենտրոնների միջոցով:

Իրավաբանական ուսանողական խորհրդատվական կենտրոնը գործում է 2013 թ. հուլիսից: Ներգրավված են առավել ակտիվ ուսանողներ: Կենտրոնի աշխատանքները համակարգում են փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոսները, սակայն այս տարի նկատվել են մի թերացումներ

Կենտրոնի գործունեությունը ուղղված է ուսանողներին իրենց իրավունքներին և պարտականություններին, ՎՊՀ-ի կանոնադրությանը, ներքին իրավական ակտերին ծանոթացմանը, տարբեր ստորաբաժանումների իրավասությունների լուսաբանմանը, քննությունների, ինքնուրույն, կուրսային, ավարտական աշխատանքների կարգերի, առաջացող խնդիրների պարզաբանմանը, ինչպես նաև քաղաքացիական, սահմանադրական օրենքների որոշակի դրույթների մեկնաբանմանը:

Կենտրոն են դիմել և բավարար տեղեկատվություն ու իրավաբանական խորհրդատվություն ստացել շուրջ 50 ուսանող և 10 ծնող:

Կենտրոնը քայլեր է մշակում խորհրդատվական աշխատանքներն ավելի ծավալելու ուղղությամբ, որի համար կօգտագործվի բուհի կայքը:

2014 թ. ուսանողական խորհրդատվական է դարձել նաև հոգեբանական կենտրոնը: Մթերեսների, արագ փոփոխվող միջավայրի պայմաններում, մեծանում է հակվածությունը ընկճախտին:

Մեր իրականության մեջ ընդունված չէ հոգեվերլուծաբանին դիմելը. նման մշակույթ չկա: Կենտրոնի նախաձեռնությունը փոքր քայլ է այդ ուղղությամբ: Վերջին տարվա ընթացքում կենտրոն են դիմել ծնողի հետ կոնֆլիկտային փոխհարաբերությունների, անձնային հատկությունների, բնավորության գծերի, սեփական Ես-ի ոչ աղեկվատ գնահատման, կուրսում ոչ բարենպաստ մթնոլորտի, խմբավորումների առաջացման, ընկեր-

ընկերուհիների միջև առաջացած տարաձայնությունների խնդիրներով:

Բոլոր կոնֆլիկտային խնդիրներն էլ տևական խորհրդատվական աշխատանքի շնորհիվ հարթվել են:

Քայլեր կատարված են, սակայն առաջիկայում հարկ կլինի մշակել ամբողջական համակարգի մոդել, որը կնպաստի աշխատանքների բարելավմանը:

Կրթության որակի ապահովում: 2014 թ. կրթության որակի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքները միտված են եղել որակի ապահովման համակարգի ներդրմանն ու կատարելագործմանը:

Կենտրոնի՝ միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները իրականացվել են հետևյալ ուղղություններով.

Կրթական գործունեության զարգացման ռազմավարություն. Աշխատանքները ուղղված են եղել կրթական ծառայությունների որակի բազմակողմանի ուսումնասիրությանը մշտադիտարկման և աուդիտի միջոցով: Ուսումնասիրությունները իրականացվել են մոնիթորինգի կարգի հիման վրա, որը մշակվել է ՈԱՇ-ի սահմանած կրթության որակի ապահովման համակարգի ցուցանիշներով:

Մասնավորապես.

1. Ուսումնասիրվել են ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կրթական ծրագրերից, գնահատման համակարգից, կառավարման առանձնահատկություններից և այլն: Ստացված արդյունքների վերլուծությունը հիմք է հանդիսանում առկա բացթողումների և կարիքների վերհանման, ինչպես նաև հետագա աշխատանքների բարելավման համար, ինչը շարունակական բնույթ է կրում և նախատեսված է իրականացնել հաջորդ տարում (տե՛ս ՈԱԿ-ի մոնիթորինգի հունիս ամսվա հաշվետվությունը):
2. Իրականացվել են բակալավրի երկու կրթական ծրագրերի աուդիտ՝ «Ռուսաց լեզու և գրականություն» և

«Դեղագործական քիմիա»: Աուդիտը իրականացվել է՝ համաձայն մշակված կարգի և հաստատված ժամանակացույցի: Արդյունքները ներկայացվել են գիտխորհրդին և տեղադրվել են ներքին ցանցում: Նախատեսվում է աուդիտորական խմբի առաջարկությունները հրապարակել թողարկող ամբիոններից ստացած բարելավման ծրագրերի քննարկումից հետո:

3. Ուսումնասիրվել են առկա և հեռակա համակարգով սովորող ուսանողների տեղեկացվածությունը կրեդիտային համակարգից, գնահատման մեթոդներից, գրագողության երևույթից և կոռուպցիայից: Ուսումնասիրության վերլուծությունը ցույց տվեց, որ հեռակա համակարգում սովորող ուսանողների իրազեկվածության մակարդակը վերոնշյալ հարցերի վերաբերյալ բավականին ցածր է: Առկա բաժնում իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են 12 հանդիպում, որին մասնակցել են 116 առաջին կուրսի ուսանողներ և կուրսերի խորհրդատուներ, որտեղ ներկայացվել է Բոլոնյան գործընթացը, համալսարանում գործող կրեդիտային համակարգը և գնահատման ընթացակարգը:
4. Իրականացվել է առաջին կուրսեցիների հոգեբանական հարմարվողականության գործընթացի ուսումնասիրություն:
5. ՎՊՀ-ում մատուցվող կրթական ծառայությունների որակի բազմակողմանի ուսումնասիրության նպատակով ՈԱԿ-ում իրականացվել են նաև ուսումնական վարչության կողմից «ՎՊՀ-ի աշխատակիցների ներգրավվածությունը և բավարարվածությունը գնահատելու նպատակով» անցկացված հարցուման

արդյունքների մուտքագրումը (105 հարցաթերթիկ) և գրաֆիկների միջոցով ներկայացում:

6. «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի (MAHATMA TEMPUS ծրագրի շրջանակում) մշակման, ներդրման, հաստատման, գնահատման, մշտադիտարկման, ներքին և արտաքին փորձաքննության և պարբերական վերանայման մեխանիզմները համակարգվել են ՈԱԿ-ի կողմից:

ՎՊՀ-ում հետազոտական գործունեությունը խթանող ռազմավարության մշակման և ներդրման նպատակով 2013 թ. իրականացվել են ոլորտին առնչվող կարիքների վերհանման աշխատանքներ, բոլոր ստորաբաժանումներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, վերապատրաստումներ, որի արդյունքում մշակվել և ներկայացվել են առաջարկներ այս ոլորտի քաղաքականության մշակման և ներդրման ուղղությամբ:

Կրթության որակի ապահովման բնագավառի զարգացման ռազմավարություն:

- Ուսումնասիրվել են գործող 28 բակալավրի և 11 մագիստրատուրայի ծրագրերի համապատասխանությունը բուհի առաքելությանը: Բուհի կարգավիճակի փոփոխության հետ (12.06.2014 թ. ինստիտուտը դարձավ համալսարան), առաջացան բազմաթիվ խնդիրներ, պայմանավորված առաքելության և ռազմավարական պլանավորման փոփոխության հետ:
- Մասնագիտական կրթական ծրագիր համապատասխանեցումը ՎՊՀ-ի առաքելությանը և մասնագիտության կրթական ծրագրերին ներկայացվող պահանջներին (վերջնարդյունքների հիման վրա), քանի որ ծավալուն և նոր գործ է, աշխատանքների հիմնական մասը նախատեսում ենք իրականացնել 2015 թ.:
- Վերանայվել է որակի ապահովման սկզբունքների հիման վրա մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարությունը:

- Ուսումնասիրվել է դասախոսների և ուսանողների մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացին: Արդյունքները ցույց տվեցին, որ ներքին շահագրգիռ կողմերի մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը քիչ է, ինչը պայմանավորված է անտարբերությամբ, սպասելիքների բացակայությամբ և ցածր մոտիվացմամբ: Այս ուղղությամբ ներկայացվել են առաջարկներ համապատասխան ստորաբաժանումներին:
- Աշխատանքային պլանով նախատեսված ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ուսումնասիրությունը ընթացքի մեջ է: Ամբողջական պատկեր ստանալու և բարելավված ծրագրի հիմքում ընկած կարիքների վերհանման և համապատասխան կառույցին առաջարկություններ ներկայացնելու նպատակով աշխատանքները կշարունակվեն հաջորդ տարի:
- Բոլոր ստորաբաժանումներին ցուցաբերվել է աջակցություն և տրամադրվել մասնագիտական խորհրդատվություն: Մասնավորապես, հունվար-մայիս ամիսներին իրականացվել են շուրջ 120 անհատական և թիմային խորհրդատվություն, տեղեկատվության տրամադրում, աշխատանքային գործընթացների համակարգման, դրանց որակի չափանիշների և բնութագրերի որոշման, չափման մեթոդների և տեղեկատվության հավաքագրման հարցերում, որին մասնակցել են դասախոսներ, վարչական աշխատողներ և ուսանողներ:
- ՈԱԿ-ը մասնակցել է նաև համալսարանի ինքնավերլուծության զեկույցի պատրաստման գործընթացին:
- Որակի ապահովման, կառավարման համակարգի ներդրման և կատարելագործման գործընթացին աջակցման նպատակով շարունակվել են աշխատանքները

կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ուղղությամբ (վերանայվել են ՈԱ հայեցակարգը, կանոնակարգը, գործընթացների մոնիթորինգի և աուդիտի հայեցակարգերը և ընթացակարգերը):

Կենտրոնն աշխատանքները հիմնականում ուղղված են եղել կազմակերպչական, վերլուծական, խորհրդատվական, տեղեկատվական, մեթոդական և այլ ուղղություններով:

Ներքին և արտաքին շահեկիցներին որակի ապահովման գործընթացներին ներգրավելու և արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքերով ապահովելու նպատակով, վերանայվում են երկարաժամկետ ռազմավարությունը և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը: Այս ուղղությամբ ՈԱԿ-ի խնդիրն է՝ աջակցել այդ գործընթացին, մատուցելով խորհրդատվական ծառայություններ, համապատասխանեցնելով այն ՎՊՀ-ի առաքելությանը:

Կարիերայի զարգացում: Հաշվետու ժամանակաշրջանում կարիերայի և հեռավար կրթության կենտրոնը, որը վերանվանվել է շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, համալսարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ վերանայել է կենտրոնի կանոնակարգը, ինչպես նաև և մշակել է հայեցակարգը: Վերոնշյալ փաստաթղթերն այժմ գտնվում են քննարկման փուլում:

Ողջ տարվա ընթացքում կատարվել են տարբեր վերլուծություններ աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերի և մանկավարժական ու ոչ մանկավարժական մասնագիտությունների վերաբերյալ: Կատարվել են նաև վերլուծություններ մեր շրջանավարտների զբաղվածության, Լոռու մարզի դպրոցների շրջանավարտների և նրանց նախընտրած մասնագիտությունների վերաբերյալ, որոնք ներկայացվել են ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերին: Վերլուծությունները շարունակվում են. դրանք հնարավորություն կտան ճիշտ պլանավորելու համալսարանական մասնագիտությունների ցանկերը և դիմորդների քանակը:

Աշխատանքային պլանով նախատեսված է եղել ձևավորել շրջանավարտների ռեզյումեների բանկ, փորձնական տարբերակով ներդնել պորտֆոլիոների կիրառությունը և անցկացնել սեմինար դասընթացներ դրանց պատշաճ կազմման համար: Վերոնշյալ բոլոր աշխատանքներն իրականացվել են, իսկ բազան պարբերաբար համալրվում է նոր փաստաթղթերով:

Մշակման փուլում է գտնվում շրջանավարտների վերջին երեք տարիների բազան: Ընդ որում՝ շրջանավարտների բազայի ստեղծման վերաբերյալ անցկացվել է հարցում ուսանողների և դասախոսների շրջանում՝ պարզելու համար, թե ինչպես են նրանք պատկերացնում բազան, ինչ ինֆորմացիա այն պետք է պարունակի: Բազայի մուտքագրման աշխատանքներն ընթացքի մեջ են, ավարտված չեն նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների սակավության պատճառով: Բազայի միջոցով հնարավոր կլինի հետադարձ կապի արդյունավետ ապահովումը:

Կենտրոնի աջակցությամբ մի խումբ ուսանողներ մասնակցել են «Կարիերայի օր» հանրապետական միջոցառմանը, որը կայացել է Վանաձորի «Օրբան» կենտրոնում: Այստեղ ներկայացվել են համալսարանի մտավոր ներուժը, առաջարկվող նոր մասնագիտությունները, թափուր աշխատատեղերը:

Կենտրոնը մասնակցել է Վանաձորի Զբաղվածության կենտրոնի կողմից կազմակերպված սեմինարներին, որոնց ընթացքում քննարկվել են կենտրոնի կողմից առաջարկվող նոր ծրագրային փաթեթները: Կենտրոնի ներկայացուցիչները և ղեկավարը հյուրընկալվել են նաև ՎՊՀ-ում, մասնակցել տարածաշրջանի աշխատաշուկայի արդի պահանջարկի քննարկումներին (սեպտեմբեր):

Կատարվել են «ՎիվաՄեյլ» ընկերության կողմից սոցիալապես անապահով, վճարովի համակարգում սովորող ուսանողներին հովանավորելու հետ կապված անհրաժեշտ քայլերը: Ապրիլ ամսին, ի հավելում նախորդ տարվա կանչի, կատարվել է նոր ուսանողների փաստաթղթերի հավաքագրում, դրանց պատշաճ ձևակերպում և տրամադրում ընկերության

համապատասխան ծրագրի պատասխանատուին: Արդյունքում ծրագրի մեջ ներգրավվել է ևս 15 ուսանող (նկատենք, որ հանրապետությունում ՎՊՀ-ին տրամադրվել են ամենաշատ տեղերը): Այս սեպտեմբերին ընկերության կողմից նոր կանչ չի եղել, սակայն ձեռք է բերվել պայմանավորվածություն ավարտած ուսանողների փոխարեն ներգրավելու ևս 10 ուսանողի: Այս պահին «ՎիվաՍելլ» ընկերության» «Կրթական ֆոնդ» ծրագրում ներգրավված է ՎՊՀ 42 ուսանող, որոնց գումարներն արդեն փոխանցված են:

Պետք է նշել, որ ուսանողները հաճախ ակտիվորեն չեն մասնակցում առաջարկվող ծրագրերին: Օրինակ՝ «Կարիերայի օրեր Դիլիջանում» միջոցառմանը ոչ մի ուսանող մասնակցելու ցանկություն չի հայտնել: Իսկ «ՊրոԿրեդիտբանկ»-ի կողմից կազմակերպված սեմինարին մասնակցել է 10 ուսանող:

ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այսօրվա համալսարաններից պահանջվում է գործել՝ ելնելով երկրում գիտելիքահեն հասարակության կառուցման գործընթացներում ակտիվ մասնակցության և հարատև (ցկյանս) կրթության սկզբունքներից, նպաստել բարձրագույն կրթության որակին, հետազոտական և նորարարական գործունեությանը: Դրանք իրականացնելու համար երկիրը կարիք ունի իրենց ուժերին վստահ համալսարանների, որոնք ունակ են որոշելու զարգացման սեփական ուղիները, ներդրում ունենալու երկրի սոցիալական, մշակութային և տնտեսական բարեկեցության ապահովման գործում:

Այս տեսակետից ձեռնարկվում են առանձին քայլեր՝ գիտությունը համալսարանի գործունեության հիմնական բաղադրիչներից մեկը դարձնելու ուղղությամբ: 2015 թ. կնշանավորվի նրանով, որ համալսարանի պատմության ողջ ընթացքում առաջին անգամ սեփական միջոցներից (ոչ բյուջետային) մոտ 56 մլն դրամ է նախատեսվում գիտական հետազոտությունների համար. նախատեսվում է գումարներ

տրամադրել ներքուհական դրամաշնորհներին, գիտական գործուղումներին, աշխատակիցների աշխատությունների տպագրությանը և այլն: Դա կնպաստի նպատակաուղղված հետազոտություններ կատարելուն:

Ըստ ամբիոնների՝ 2014-ին կատարված գիտահետազոտական աշխատանքների վիճակագրությունը հետևյալն է.

Աղյուսակ 22. 2014 թվականին հրատարակված գիտական աշխատանքների քանակն ըստ ամբիոնների

h/h	Ամբիոնի անվանումը	Թեզիս	Հոդված	Ուսումնամեթոդական աշխատանք	Մենագրություն, գիրք, բարսրան	Դասափոք
1.	Հայոց լեզվի	-	6	2	1	
2.	Գրականության	-	12	2	3	
3.	Մանկավարժության	10	17	-	1	
4.	Հոգեբանության և սոցիոլոգիայի	-	2	-	-	
5.	Օտար լեզուների	-	10	-	-	
6.	Ռուսաց լեզվի	-	9	1	1	
7.	Պատմության	-	4	-	1	
8.	Տնտեսագիտության տեսության	-	6	1	-	
9.	Փիլիսոփայության և քաղաքագիտության	-	3	-	-	
10.	Կենսաբանություն	-	12	1	-	
11.	Քիմիայի	-	14	-	-	
12.	Մաթեմատիկա	-	-	-	-	
13.	Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների և մոդելավորման	-	3	-	-	
14.	Ֆիզիկայի	2	5	-	-	
15.	Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության և արտակարգ	-	2	-	1	

	իրավիճակների հիմնահարցեր					
16.	Արվեստի	-	-	-	-	
Ընդամենը		12	105	7	8	

2013-ի համեմատ հոդվածների թիվը նվազել է 15-ով, սակայն ավելացել է մենագրությունների, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական աշխատանքների թիվը:

Երիտասարդ դասախոսների և աշխատակիցների համար համալսարանում շարունակում են կազմակերպվել թեկնածուական որակավորման ստուգարքների ու քննությունների նախապատրաստման դասընթացները, գործում են որակավորման հանձնաժողովները՝ «Փիլիսոփայություն», «Օտար լեզու (անգլերեն)» և «Ինֆորմատիկայի հիմունքներ» առարկաներից: Բացի դրանից՝ դիմել ենք ԲՈՂ-ին թեկնածուական ատենախոսության թեմաներ հաստատելու և մասնագիտական որակավորման քննությունների անցկացման իրավունք ստանալու համար «Բուսաբանություն», «Հայ դասական գրականություն», «Նորագույն շրջանի հայ գրականություն», «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Մանկավարժության տեսություն և պատմություն», «Ֆիզիկական քիմիա», «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» մասնագիտությունների համար:

Անցած տարիներին նվազել էր Համալսարանի ասպիրանտների թիվը, վտանգված էր երիտասարդ կադրերի ներհոսքը գիտության ոլորտ ու գիտական ներուժի սահուն սերնդավոխությունը: Նախորդ տարի ասպիրանտների թվի ավելացման և ասպիրանտական կրթության կայացման նպատակով մագիստրատուրայի ուսանողների համար թողարկող ամբիոններում կազմակերպվել էին ասպիրանտուրայի ընդունելության քննությունների ծրագրերին համապատասխան մասնագիտական խորհրդատվություններ և դասընթացներ օտար լեզվից ու ինֆորմատիկայից: Հաշվետու տարում, սակայն, այս դասընթացները չեն կազմակերպվել դիմորդների բացակայության

պատճառով: 2014 թ. ՎՊՀ-ում հայցորդ ձևակերպվելու դիմում է ներկայացրել 5 մարդ:

Համալսարանի հավատարմագրմանը, կրթության որակին ներկայացվող կարևորագույն պահանջներից մեկը պրոֆեսորադասախոսական համակազմի որոշակի հարաբերակցությամբ գիտական աստիճան և կոչում ունենալու խնդիրն է: Այս տեսանկյունից տարբեր ձևերով աջակցում ենք գիտական աստիճան և կոչում ստանալու գործընթացներին:

2014 թվականին գիտությունների թեկնածուի աստիճան է ստացել 9 աշխատակից, իսկ 2 թեկնածուական թեզ պաշտպանվել է դեկտեմբերի ամսին:

Պաշտպանության ներկայացված, նախապաշտպանություն անցած ևս 2 թեզերի հրապարակային պաշտպանությունը նախատեսված է 2015 թվականի առաջին եռամսյակում:

2014 թվականին համալսարանի գիտխորհրդի կողմից դրոցենտի գիտական աստիճան է շնորհվել 5 աշխատակցի:

Համալսարանի գիտական խորհուրդը քննարկել և դրական կարծիքով ԲՈՀ է առաքել ևս 4 աշխատակիցների՝ դրոցենտի գիտական կոչման հայցադիմումները:

2014 թ.-ը առատ էր գիտաժողովներով:

Ապրիլի 10-ին Հայաստանում Ղազախստանի դեսպանատունը և «Եվրոպական ինտեգրում» կազմակերպությունը «Աստանայի տնտեսական ֆորումի» շրջանակներում գիտաժողով են անցկացրել համալսարանում, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանի ֆինանսատնտեսական բազմաթիվ խնդիրներ:

Ապրիլի 16-ին հետազոտության և վերլուծության «Ինտեգրացիա և զարգացում» կազմակերպությունը «Հայաստանը և Եվրասիական ինտեգրումը» թեմայով գիտաժողով անցկացրեց ՎՊՀ-ում: Քննարկման թեմաները ԵվրԱզԷս-ին Հայաստանի ինտեգրման քաղաքական և տնտեսական հետևանքներն էին: Գիտաժողովին ՎՊՀ-ից ելույթ է ունեցել Ֆ.Մովսիսյանը:

«Պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» խորագրով համատեղ գիտաժողով անցկացնելու առաջարկով մեզ էր դիմել «Զարգացման ծրագրերի հայկական կենտրոնը»: Գիտաժողովին մասնակցում էին Վանաձորի ոստիկանության, զինկոմիսարիատի ներկայացուցիչներ, դպրոցների զինղեկներ: ՎՊՀ-ից գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Ռ.Ավագիմյանը և Ա.Սարգսյանը:

Հոկտեմբերի 8-9-ը տեղի է ունեցել «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» երրորդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված ՎՊՀ 45-ամյակին: Գիտաժողովը խիստ ներկայացուցչական էր. մասնակցում էին գիտնականներ ոչ միայն Հայաստանի բուհերից և Արցախից, այլև Ռուսաստանից, Լեհաստանից, Էստոնիայից, Մոլդովայից, Սլովակիայից (ընդհանուր առմամբ 33 մասնակից):

Հոկտեմբերի 7-11-ը իր աշխատանքներն էր սկսել Հայկական քիմիական ասոցիացիայի կազմակերպած IV միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր գիտության այդ բնագավառի նվաճումներին և խնդիրներին: Կազմակերպչական և խմբագրական աշխատանքներին մեր համալսարանից ներգրավված էին Գ. Կ. Խաչատրյանը, Ա. Մ. Սանթրոյանը և Հ. Ա. Ղազարյանը: Գիտաժողովը մեկ արտագնա նիստ է գումարել Վանաձորի պետական համալսարանում՝ նաև արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ: ՎՊՀ-ից զեկուցումներով հանդես եկան քիմիայի և ֆիզիկայի ամբիոնների 6 դասախոսներ և մեկ հայցորդ:

Իսկ հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ այս տարվա վերջին գիտաժողովը՝ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 145-ամյակին: Հանրապետական այս գիտաժողովին կարդացվել է 19 զեկուցում, որոնցից մեկը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, 10-ը՝ Խ. Աբովյանի անվան ԵՊՄՀ-ի տարբեր ամբիոնների, իսկ 3-ը՝ Լոռու մարզի դպրոցների ներկայացուցիչներ էին: Գիտաժողովը նվիրված էր մանկավարժության, դասավանդման և բանասիրության խնդիրներին: Որպես նվաճում՝ պետք է նշել այն փաստը, որ

գիտաժողովների նյութերը արդեն տպագրվել էին մինչև գիտաժողովների սկսվելը:

Չնայած հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում արձանագրված ձեռքբերումներին՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- գործատուների հետ համագործակցության և գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման բացակայությունը,
- ասպիրանտների (հայցորդների) փոքր թվաքանակը,
- բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի անկատարությունը,
- մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնակների սակավաթիվ լինելը,
- արտասահմանյան առաջատար պարբերակներում գիտական հրապարակումների փոքր թիվը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի անհամաչափ մասնակցությունը,
- հետազոտությունների ֆինանսական աղբյուրների բազմազանեցված չլինելը,
- գիտահետազոտական արտադրանքի իրացման և ներքին դրամաշնորհների ձեռքբերման կանոնակարգերի բացակայությունը:

Կարևորվել է ուսանողների գիտահետազոտական գործունեությունը: Գիտահետազոտական գործունեության զարգացման սկզբունքային հարցը գիտամանկավարժական դպրոցների զարգացումն է: Իսկ գիտամանկավարժական դպրոցների աջակցության գործընթացն առնչվում է՝

- տարբեր աստիճանակարգերում գտնվող բարձրակազմի աշխատողների կայացմանը,

- գիտահետազոտական հակվածություն ունեցող ուսանողների բացահայտմանն ու աջակցմանը, նրանց ներգրավմանը գիտահետազոտական աշխատանքներում (նաև ֆինանսական հիմունքներով),
- ասպիրանտուրայում ուսուցմանը,
- երիտասարդ գիտնականների գիտակազմակերպական հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքն ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասն է, որն իրականացվում է ֆակուլտետներում, ամբիոններում, կուրսային կամ ավարտական աշխատանքներ գրելիս: Քիչ չեն այն ուսանողները, որոնք մասնակցում են գիտաժողովների, սենինարների ինչպես Համալսարանում, այնպես էլ ՀՀ այլ բուհերում:

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովին մասնակցել են ՎՊՀ համապատասխան ամբիոնների կողմից երաշխավորված 24 ուսանողներ, որոնց մի մասի աշխատանքները տպագրվել են:

ԵՊՀ-ի կողմից կազմակերպված հանրապետական գիտական ուսանողական նստաշրջանին մասնակցել են ՎՊՀ 22 ուսանողներ:

Վանաձորում անցկացված Հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութերը, ցավոք, դեռևս տպագրված չեն: Ներառված է 37 զեկուցում, նախատեսվում է տպագրել 2015 թ. առաջին եռամսյակում:

ԱրՊՀ-ի կողմից կազմակերպված հանրապետական գիտական ուսանողական նստաշրջանին մասնակցել են ՎՊՀ-ի 4 ուսանողներ:

2015 թ. մայիս ամսին նախատեսվում է անցկացնել ՌԻԳԸ հանրապետական գիտաժողով: Իրազեկման բոլոր աշխատանքները կատարված են, ձևավորված է խմբագրական խորհուրդը:

Գրադարանային աշխատանք: Գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների կազմակերպման համար կարևոր է համալսարանի գիտական գրադարանի աշխատանքների ճիշտ կազմակերպումը: Գրադարանի 2014 թ. գործունեության պլանավորման մեջ առանցքային տեղ էր հատկացվել հաշվառման և սպասարկման աշխատանքների արդիականացմանը: Դրա հենքը պետք է դառնար գրադարանի գլխավոր մատյանների թվայնացումը, որը սկսվել էր տակավին 2012 թ. հունիս ամսից: 2014 թ. ապրիլին ավարտվել են էլեկտրոնային գրքացուցակի ստեղծման աշխատանքները: Ըստ այդմ՝ գրադարանի գրքաֆոնդը կազմել է 220.993 միավոր: Սակայն գրապահոցների հետ նրա համեմատությունը ցույց է տվել, որ ստացված ցուցակները և քարտարանները չեն արտահայտում գրապահոցում առկա գրաֆոնդը: Այդ իսկ պատճառով գրադարանում 2014 թ. ապրիլից սկսվել է գույքագրման գործընթաց, որի շրջանակներում կազմվում են նոր գլխավոր մատյաններ և էլեկտրոնային գրքացուցակներ:

2014 թ. գործունեության պլանով նախատեսված աշխատանքներից մեկը՝ գրադարանի էլեկտրոնային քարտարանի ստեղծումը, մնացել է անկատար՝ էլեկտրոնային գրքացուցակների խոտանման պատճառով: 2015 թ. մարտի սկզբին կավարտվի գրադարանի հայերեն գրապահոցի հաշվառման աշխատանքը, և էլեկտրոնային գրքացուցակների համապատասխան մշակման և տեխնիկական ապահովման դեպքում կարելի կլինի գործարկել էլեկտրոնային քարտարանը:

2014 թ. ապրիլից սկսվել են լոկալ էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները: Բարեփոխվել է ծրագիրը, և ներկա պահին այն պարունակում է «Հայոց լեզու» և «Պատմություն» մասնագիտություններին վերաբերող շուրջ 1500 անուն գիրք: Տեխնիկական ապահովման դեպքում էլեկտրոնային շտեմարանը կարող է գործարկվել արդեն 2015 թ. սկզբներին: Ներբեռնման աշխատանքներն ավելի արդյունավետ կարող են լինել ամբիոնների օժանդակության, պատասխանատու օպերատորների

լրիվ ծանրաբեռնման և համացանցային կապի բարելավման դեպքում:

2014 թ. շարունակվել են գրադարանի նորացման և հնացած գրականության ակտավորման աշխատանքները: Հաշվետու տարվա ընթացքում գրադարանը համալրվել է 1444 միավոր գրքով, որից 176-ը բուհական դասագիրք է, 72-ը՝ ուսումնասովանողական ձեռնարկներ, իսկ փոխարեն բերվել է 45 միավոր գիրք:

Գնվել է 652.800 դրամ ընդհանուր արժողությամբ 158 միավոր գիրք, որոնցից 103-ը բուհական դասագրքեր են: Նվիրատվությամբ ստացվել է 1250 միավոր գիրք:

2014 թ. գրադարանում պատճենահանման միջոցով գրաֆոնդը համալրվել է 36 միավոր գրքով, վերականգնվել է 72 գիրք:

Ակտավորվել է 7545 միավոր գիրք:

2014 թ. ստացվել է 21 անուն պարբերական հրատարակություն, որից 6-ը՝ ՌԴ-ից, իսկ բաժանորդագրության համար ընդհանուր առմամբ ծախսվել է 837 հազար դրամ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2014 թ. միջազգային գործունեության զարգացման ռազմավարությամբ և աշխատանքային պլանով նախատեսված է եղել.

- արտասահմանյան և ԱՊՀ երկրների առաջավոր բուհերի հետ համագործակցության զարգացում,
- Բոլոնիայի գործընթացի հիմնական գերակայությունները խթանող ծրագրերի մշակում,
- համալսարանի աշխատակիցներին, ուսանողներին դրամաշնորհային ծրագրերի, կոնֆերանսների, սեմինարների մասին իրազեկում,
- դրամաշնորհային նախագծերի իրականացում,
- դրամաշնորհային նախագծերի որոնում և ծրագրերի մշակում,

- մասնակցություն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում կարելի է արձանագրել ՎՊՀ-ի միջազգային գործունեության ակտիվացում: Համալսարանը 10 միջազգային կոնսորցիումների անդամ է: Այդ կոնսորցիումների անդամ բուհերի ընդհանուր թիվը 157 է: Դրանք եվրոպական երկրների և հետխորհրդային հանրապետությունների առաջավոր բուհեր են: ՎՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի Կոստրոմայի պետական համալսարանի, Մինսկի լեզվաբանական համալսարանի, Լեհաստանի Կրոսնո քաղաքի համալսարանի, Ղազախստանի Կոկշետաու քաղաքի համալսարանի, Գերմանիայի Դարմշտադտ քաղաքի կիրառական գիտությունների համալսարանի հետ, ինչպես նաև եռակողմ՝ Վանաձոր-Դարմշտադտ-Կոստրոմա համագործակցության պայմանագիր: ՎՊՀ-ն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի ակտիվ անդամ է, 9 դրամաշնորհային նախագծերի գործընկեր: Հայաստանում Erasmus+ազգային գրասենյակի վիճակագրական վերլուծության համաձայն՝ համալսարանը միջազգային նախագծերի թվով Հայաստանում ԵՊՀ-ից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը:

Տեմպուս նախագծերի շրջանակներում ձևավորված են աշխատանքային խմբեր, որոնք հետևողականորեն իրականացնում են աշխատանքներ բոլոր շրջափուլերում և կանոնավոր կերպով ներկայացնում են հաշվետվություններ ՎՊՀ-ի ռեկտորատի և գիտխորհրդի նիստերին, ինչպես նաև գործընկեր բուհերում խորհրդակցությունների ժամանակ: Հարկ է նշել, որ նախագծերի աշխատանքներին կարելի էր ներգրավել ՎՊՀ-ի ավելի շատ աշխատակիցների, սակայն խանգարող գործոն է օտար լեզվի, մասնավորապես անգլերենի իմացության ոչ պատշաճ մակարդակը. բանն այն է, որ անգլերենը ոչ միայն խորհրդակցությունների, այլև բոլոր հաշվետվությունների և հաղորդումների աշխատանքային լեզուն է: Այդ գործոնը զգալի է նաև ուսանողների և դասախոսների Ianus և Eminence (Erasmus

Mundus) շարժունության ծրագրերում: Չնայած դրան՝ այստեղ ևս կարելի է նշել մեր զգալի նվաճումները: Օրինակ՝ Eminence նախագծի 2-րդ փուլում մեր բուհից շահել էին 9 ուսանող (դիմել էին 25-ը): Երկու թվերն էլ առաջատար ցուցանիշ են ամբողջ նախագծում: Բավական է նշել, որ թվով հաջորդը եղել է բուհ, որտեղից անցել են 3 ուսանող:

Ընդհանուր առմամբ Erasmus Mundus նախագծերով (Ianus, Eminence) մենք արդեն ունենք 26 ուսանող, որոնք տվյալ ծրագրերի շրջանակներում սովորելու են մեկնել արտասահմանյան բուհեր (Լեհաստան, Ռումինիա, Շվեյցիա, Պորտուգալիա, Իսլանդիա, Իսպանիա, Ֆրանսիա):

Ուրախալի է, որ մենք աստիճանաբար դառնում ենք ոչ միայն ուղարկող, այլև ընդունող կողմ: Մեր բուհում այդ ծրագրով սովորում է Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի մագիստրանտ Դանուտա Ստոյակը: Մենք ընդունել ենք նաև դասախոսներ, 2-ը՝ Ռումինիայից, 2-ը՝ Լեհաստանից: Լեհաստանի վերոնշյալ համալսարանից 2 պրոֆեսոր ցանկություն են հայտնել 2015 թ. փետրվարին մի շարք դասախոսություններով հանդես գալու մեզ մոտ: Մեր բուհի դասախոս Մոֆյա Բաբայանը 2014 թ. հրավիրված էր դասախոսություններով և թրեյնինգներով հանդես գալու Դարմշտադտ քաղաքում:

Միջազգային համագործակցության ներկա փուլում տեղի է ունեցել հարացույցի փոփոխություն, և Եվրամիության անդամ երկրների հետ գիտակրթական և մշակութային համագործակցության շրջանակներում բացվում է նոր՝ Erasmus + նախագիծը: ՎՊՀ-ում կազմակերպվել էր մեծ տեղեկատվական աշխատանք (6 սեմինար, այդ թվում Erasmus + ազգային գրասենյակի սեմինարը, որը վարում էին Լանա Կառլովան և Անի Թորոսյանը)՝ ծրագրերի մանդատին դասախոսներին և ուսանողներին ծանոթացնելու նպատակով: Նոր նախագծի շրջանակներում տարվում է համագործակցության համար գործընկերների փնտրման մեծ աշխատանք: Այդ աշխատանքն սկսվել է հունիսին, երբ մեր բուհ այցելեցին Լինեու համալսարանի

(Դանիա) պրոֆեսոր ՌԻՖ Ռոզենը և Լեհաստանի պատվիրակությունը:

Ներկայումս տարվում են բանակցություններ Դանիայի, Լեհաստանի և Բուլղարիայի համալսարանների հետ՝ ուսանողների և դասախոսների շարժունության երկկողմ պայմանագրերի վերաբերյալ: Խոսքը վերաբերում է այն պայմանագրերին, որոնց արդյունքում ուսանողները կկարողանան ստանալ համատեղ և երկակի դիպլոմներ:

Բուհ-դպրոց համագործակցություն

2014թ ՎՊՀ համագործակցության և կապերի բաժնի բուհ-դպրոց ենթաբաժնի աշխատանքային պլանով նախատեսվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ մարզի դպրոցների աշակերտության համար: Միջոցառումները կրել են ուսումնական, ճանաչողական, մեթոդական, մշակութային բնույթ: Համագործակցության շրջանակներում աշխատանքային պլանով նախատեսվել և կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, խորհրդատվություններ, բաց դասեր, սեմինարներ, նախապատրաստական դասընթացներ, հանդիպումներ շրջանավարտների հետ, բազմաբնույթ ուսումնական, սպորտային, մշակութային միջոցառումներ, օլիմպիադաներ:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ և անկետային հարցումներ են անցկացվել ք.Վանաձորի թվով 6 հիմնական դպրոցների IX դասարանի աշակերտության շրջանում:

Շարունակաբար անցկացվել են 2014-2015 ուստարվա ընդունելության նախապատրաստական դասընթացները հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն լեզու, պատմություն, մաթեմատիկա, կենսաբանություն առարկաներից: Արդյունքում մեր բուհի առկա և հեռակա ուսուցման համակարգ դիմել և ընդունվել են թվով 29 աշակերտ, այլ բուհեր՝ 5 աշակերտ: Մշակվել և իրավաբանի փորձաքննությանն է ներկայացվել 2015-2016 ուստարվա

ընդունելության քննությունների նախապատրաստական վճարովի դասընթացների կանոնակարգը, պայմանագիրը, տրվել է դասընթացների հայտարարություն հեռուստատեսությամբ և Լոռու մարզ թերթում, կազմվել է դասընթացների անցկացման գրաֆիկ:

Բայց երբ դասընթացները դարձան վճարովի, ոչ մի դիմորդ նախապատրաստական դասընթացներին մասնակցելու ցանկություն չհայտնեց: Չնայած պայմանագրով նախատեսվում էր, որ դիմորդի՝ ՎՊՀ-ի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում վճարված գումարը ամբողջությամբ փոխանցվում է որպես ուսման վարձ, և կամ վերադարձվում է, եթե դիմորդը ընդունվել է ՎՊՀ-ի անվճար համակարգ:

2014թ կազմակերպվել և անցկացվել են թվով 10 բաց դասեր և սեմինարներ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, պատմություն, հայոց լեզու և գրականություն առարկաներից, ասմունքի երկու մրցույթ՝ «Սահյանական պոեզիա» և «Շիրազ-100» խորագրերով, դպրոցականների լուսանկարչական աշխատանքների մրցույթ՝ բնապահպանական թեմայով: Մրցույթներին մասնակցել են Լոռու մարզի 60 դպրոցների թվով 172 աշակերտներ: Դիպլոմներով, շնորհակալագրերով և հուշանվերներով պարգևատրվել և խրախուսվել են 40 աշակերտներ:

Անցկացվել է 9-11-րդ դասարանների աշակերտների մարզային առարկայական օլիմպիադա՝ հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա առարկաներից: Մարզի դպրոցների՝ օլիմպիադային հայտագրված 307 աշակերտներից օլիմպիադային մասնակցել են 282-ը, բնագիտական հոսքից օլիմպիադային մասնակցել է 139 աշակերտ, հումանիտար հոսքից՝ 143 աշակերտ:

Ըստ դասարանների՝ առարկայական օլիմպիադային մասնակցել են 9-րդ դասարաններից՝ 64 աշակերտ, 10-րդ դասարաններից՝ 113 աշակերտ, 11-րդ դասարաններից՝ 105 աշակերտ:

2014թ. նոյեմբերի 28-ին կենսաբանաքիմիական ֆակուլտետի «Ֆակուլտետի բաց դռների շաբաթ» միջոցառումների շրջանակում անցկացվեց Լոռու մարզի IX-XII դասարանի աշակերտների առարկայական օլիմպիադա՝ «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից: Առաջին անգամ օլիմպիադան կազմակերպվեց Ս.Մերգելյանի համակարգչային կենտրոնում՝ համակարգիչների միջոցով: Օլիմպիադային մասնակցեցին Լոռու մարզի 15 դպրոցների, ՎՊՀ վարժարանի թվով 152 աշակերտներ, այդ թվում կենսաբանությունից՝ 89 աշակերտ, քիմիայից՝ 63 աշակերտ: Օլիմպիադան անցկացվեց երկու փուլով. առաջին փուլը անցկացվեց համակարգիչների միջոցով, երկրորդ փուլը՝ գործնական աշխատանքի ձևով: Երկրորդ փուլին մասնակցեցին կենսաանություն առարկայից թվով 12 աշակերտ, քիմիայից՝ թվով 13 աշակերտ: 33 աշակերտ պարգևատրվեց դիպլոմներով, պատվոգրերով, հուշանվերներով: Օլիմպիադայի ավարտվելուց կես ժամ հետո առաջադրանքների պատասխանները տեղադրվեցին ինստիտուտի կայքէջում:

Այս տարի անցկացվեցին մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ Լոռու մարզի 28 հիմնական և ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտների և շրջանավարտների հետ: Նրանց ընթացքում բացատրվում և պարզաբանվում են ընդունելության քննությունների արդեն առկա մասնագիտությունների հետ կապված խնդիրները:

ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Համալսարանի գործունեությանը, ներհամալսարանական կյանքին և նորություններին հանրությանն իրազեկելու, դրանով իսկ ղեկավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու նպատակով համալսարանի լրատվության և տպագրության բաժինն աշխատանքներ է իրականացրել տարբեր ուղղություններով՝

- ներբուհական իրադարձությունների լուսաբանում և իրազեկում ՁԼՄ-ներով,
- «Բանբեր ՎՊՀ» հաղորդաշարի, տեսաֆիլմերի, գովազդերի, հայտարարությունների պատրաստում,
- «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի հրատարակում,
- գիտական նյութերի ժողովածուների ձևավորում և հրատարակության պատրաստում,
- ուսումնական ձեռնարկների տպագրություն, համալսարանի համացանցային կայքի վարում և թարմացում,
- տեսա-ֆոտոարխիվավորում, ձևավորման և տպագրության աշխատանքներ և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում լույս է տեսել «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի 7 համար, տպագրության է պատրաստվել գիտական նյութերի 3 ժողովածու և 3 ուսումնամեթոդական ձեռնարկ: Ձևավորվել և տպագրվել են համալսարանում կազմակերպված բոլոր միջոցառումների հրավիրատոմսերը, ծրագրերը, գովազդային թերթիկներ, պայուսակներ, թղթապանակներ, 2 պաստառ, այլ նյութեր: Կատարվել են նաև ուսումնաօժանդակ պարապմունքներին անհրաժեշտ տպագրական, պատճենահանման, կազմարարական աշխատանքներ:

2014 թվականին առավել արդյունավետությամբ է գործել համալսարանի կայքէջը. մանավանդ նորովի ձևավորումից ու բովանդակային փոփոխություններից հետո կտրուկ ավելացել է այցելուների թիվը՝ ավելի քան 3 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշները. մեկ տարվա ընթացքում կայքի այցելուների թիվը կազմել է 170 296:

Հաշվետու ժամանակահատվածում փոխվել է կայքէջի հասցեն, կատարվել են էջերի թարմացման աշխատանքներ, փոխվել են բուհին առնչվող էլեկտրոնային հասցեները (VSPI-ից VSU), գետեղվել են կենսագրություններ, թարգմանություններ

ռուսերեն և անգլերեն (30-ական էջ, բուհի ստորաբաժանումներին վերաբերող), կարգեր (ավելի քան 130), կանոնադրություններ, նորություններ, հայտարարություններ (132), ինչպես նաև գրքեր, գիտական նյութերի ժողովածուներ (3), համալսարանի երկշաբաթաթերթը (7) բոլորը PDF տարբերակով: Կայքէջում գետեղվել են նաև միջազգային ուսումնագիտական ծրագրերին վերաբերող բազմաթիվ նյութեր, գործել է հարց-պատասխան բաժինը:

Նկատելիորեն ավելացել է համալսարանում տեղի ունեցած միջոցառումների մասին պատմող նյութերի հանդեպ հանրային հետաքրքրվածության աստիճանը. յուրաքանչյուր նոր նմանօրինակ նյութ ապահովում է միջինը 350-400 ընթերցում, ինչը կայքէջը մրցունակ է դարձնում հանրապետական լրատվադաշտում: Հաշվետու ժամանակաշրջանում կայքը պարբերաբար թարմացվել է՝ ազատվելով հնացած տեղեկատվական նյութերից, սակայն ամբողջությամբ ազատվել դրանցից չի հաջողվել: Առայժմ անլուծելի է կայքի ռուսերեն և անգլերեն տարբերակներն ունենալու խնդիրը. պատճառը մշտական հաստիքով աշխատողների բացակայությունն է: Կայքի աշխատանքների բնականոնության վրա բացասաբար է անդրադառնում նաև կայքավարի՝ ոչ ամբողջական /կես/ դրույքով աշխատելու հանգամանքը:

Կայքէջի «Նորություններ» բաժնում հաշվետու ժամանակաշրջանում տեղադրվել են երկու անգամ ավելի նյութեր՝ ընդհանուր թվով 166, որոնցից 114-ը իրադարձային են, 52-ը՝ թեմատիկ (տե՛ս աղյուսակը): Թեմատիկ նյութերում մեծ տեղ են զբաղեցրել բուհի տարբեր ստորաբաժանումների մասին պատմող հոդվածները, ռեպորտաժները, միջազգային բուհերում իրենց ուսումնառությունը շարունակող ուսանողների մասին ակնարկները:

Աղյուսակ 23. Հրատարակումների քանակը

<i>Խ/Խ</i>	<i>Բովանդակություն</i>	<i>Քանակ</i>
1.	Միջազգային անցուդարձը ներկայացնող (արտերկրում և մեզ մոտ գտնվող ուսանողներ, գործող միջազգային ծրագրեր և այլն)	19
2.	Միջազգային և հանրապետական գիտաժողովներ, հանդիպումներ, այցեր	13
3.	Բուհի առօրյայի (համակարգչային կենտրոններ, լեզուների ուսուցման կենտրոն, տարբեր դասընթացներ, նորամուծություններ)	11
4.	Ամենամյա միջոցառումներ (ֆակուլտետի օր, ստուգման գրքույկների, դիպլոմների հանձնման արարողություններ և այլն)	18
5.	Հենակետային վարժարան	14
6.	ՎՊՀ քոլեջ	5
7.	Բուհ-դպրոց կապ	15
8.	Տոներ	15
9.	Ուսանողական խորհուրդ	11
10.	Մարզական նվաճումներ, ռազմահայրենասիրական և մարզական միջոցառումներ	8
11.	Ռեկտորատի, գիտխորհրդի, ամբիոնների նիստեր, քննարկումներ	12
12.	Ճամբար	9
13.	Ամառային միջոցառումներ	6
14.	Պրակտիկա (բուհում և բուհից դուրս)	8

Հաշվետու ժամանակաշրջանում բուհի ֆեյսբուքյան էջի ընկերների թիվը տասնմեկ անգամ ավելացել է (230-ից 2530): Ֆեյսբուքյան համագործակցությունը ներառում է հանրապետության տարբեր մարզերի դպրոցների, գործարարների, աշխատակիցների, շրջանավարտների, ուսանողների, դպրոցականների, որոնց ամեն օր հասանելի են բուհի անցուդարձի մասին պատմող ռեպորտաժները, բուհական կյանքի այլ իրադարձություններ, հայտարարություններ և այլն:

Մեզ հետ համագործակցում և մեր պաշտոնական կայքէջի նյութերն իրենց էջերում տեղադրում են www.lorinews.com,

www.lorinews.am, www.hetq.am, www.asparez.am կայքերը, որոնք մեր տարածաշրջանում ամենաշատ ընթերցումն ունեցող կայքէջերն են: Համալսարան դառնալու մասին մեր հրապարակումներին արձագանքեցին նաև սփուման ավելի մեծ ոլորտ ունեցող այնպիսի կայքեր, ինչպիսիք են www.azg.am, www.armenpress.am, www.lin.am, www.henaran.am, www.armweeklynews.am, www.shamshyan.com, և այլ: Գաղտնիք չէ, որ այսօր վերը նշված էլեկտրոնային կայքէջերն ավելի շատ ընթերցում ունեն, քան ցանկացած տպագիր թերթ:

Ֆեյսբուքյան էջում ակտիվ է նաև նամակների բաժինը. բազմաբնույթ հարցերով էջին դիմում են ինչպես բուհի ուսանողները, այնպես էլ դպրոցականները: Սա կարճ ճանապարհ է բուհի հետ կապված տարատիպ հարցերի պատասխանները արագ ստանալու համար: Այսպես էջում տեղադրվել են 126 նյութեր, 45 հայտարարություն, 30 տեղեկացում, 4 զգուշացում, բազմաթիվ լուսանկարներ բուհի միջոցառումներից, բոլոր ստորաբաժանումներից և այլն:

Զգալի ընդհատումներով է եթեր հեռարձակվել ՎՊՀ բանբեր՝ հեռուստահաղորդումը, սակայն այդ բացը լրացվել է լրատվական թողարկումների միջոցով: Իսկ ընդհատումները բացատրվում են օպերատոր-մոնիտորի հաստիքի՝ տևական ժամանակ թափուր լինելով և համապատասխան մասնագետի բացակայությամբ:

Այս մեկ տարվա ընթացքում բուհի անցուղարձն առավել շատ լուսաբանել է «Լոռի թի-վի» հեռուստաընկերությանը՝ 83 հաղորդում, (նախորդ տարի՝ 45), իսկ Լոռու «Միգ»-ը՝ 16 (նախորդ տարի՝ 12), «9-րդ ալիք»-ը՝ 14 (նախորդ տարի՝ 26). այս հեռուստաալիքների պասիվությունը թերևս կապված է պարբերական լրատվական թողարկումներ չունենալու հետ («9-րդ ալիք»-ն այժմ լրատվական հաղորդումներ չունի): Իսկ «Ֆորտունա» հեռուստաընկերությունը ոչ միշտ է արձագանքում հրավերներին և մեր մասին թողարկել է ընդամենը 12 տեսանյութ:

Բուհի մասին առավել շատ նյութեր տպագրվել են «Լոռու մարզ» թերթում՝ 87 (նախորդ տարի՝ 56), «Վանաձորյան իճանկար»-ում՝ 23 (նախորդ տարի 6), «Հետք»-ում՝ 21 (նախորդ տարի՝ 15), «Առավոտ»-ում՝ 14 (նախորդ տարի՝ 6):

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2014-2015 ուսումնական տարում ՎՊՀ հենակետային վարժարան են ընդունվել 139 աշակերտ: Ներկայումս վարժարանն ունի 376 աշակերտ: Զգալի աշխատանքներ են տարվել վարժարանում ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ: Այս գործին էականորեն նպաստել է այն հանգամանքը, որ ինստիտուտի 4 դասախոսներ տարիներ շարունակ դասավանդում են հենակետային վարժարանում: Տարվա ընթացքում 4 ուսուցիչ անցել է վերապատրաստման, այսպիսով վերապատրաստված ուսուցիչների թիվը հասել է 16-ի: Ներկայումս հենակետային վարժարանում աշխատում են գիտության 6 թեկնածուներ:

Ուսուցման որակի բարձրացման նպատակով շարունակվում է համագործակցությունը ինստիտուտի ամբիոնների հետ, մասնավորապես սերտ կապեր ունենք «Փիլիսոփայության և քաղաքագիտության», «Պատմության», «Ինֆորմատիկայի», «ՄԴՄ » և «Ֆիզիկայի» ամբիոնների հետ: Հնարավորություն ունենք օգտագործել ինստիտուտի բոլոր լաբորատորիանները և համակարգչային լսարանները:

Անցած ուսումնական տարին վարժարանի 9 աշակերտներ ամփոփել են գերազանց, 82-ը՝ հարվածային առաջադիմությամբ: Այս տարի վարժարանի 50 աշակերտներ մասնակցել են առարկայական օլիմպիադաների քաղաքային փուլին: Մարզային փուլը հաղթահարած աշակերտից երկուսն անցել են հանրապետական փուլ: Վարժարանի 25 աշակերտ մասնակցել է ՎՊՄԻ-ում կազմակերպված օլիմպիադաների, ասմունքի մրցույթին: Մեր աշակերտները ակտիվորեն մասնակցել են «ԱՅԲ»

հիմնադրամի կազմակերպած «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին և նվաճել տարբեր մրցանակներ:

Այս տարվա 123 շրջանավարտներից 62-ն ընդունվել են ՎՊՀ առկա ուսուցման համակարգ, որից 16-ը պետպատվերով, 18-ը՝ հեռակա, 22 աշակերտներ էլ ընդունվել են հանրապետության այլ բուհեր:

Վարժարանում գործում է «Բանավեճի ակումբ», որը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքային և մարզային մրցումներին: 2014թ. վարժարանի սասներն ընդգրկվել են Պատանեկան նվաճումներ ծրագրում և մասնակցել են Երևանում կազմակերպված տոնավաճառին:

Հետևողական աշխատանքներ ենք կատարում ռազմա-հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ:

Վարժարանի աշակերտները որոշակի ձեռքբերումների են հասել նաև սպորտային բանազավառում. մասնակցել են շախմատի աշակերտական առաջնությանը՝ գրվելով մրցանակային տեղ, Վանաձորի ավագանու ֆուտբոլի գավաթի առաջնությանը զբաղեցրել ենք 2-րդ տեղը, իսկ վոլեյբոլի քաղաքային առաջնությանը՝ 3-րդ տեղը, բազմամարտի Վանաձորի քաղաքային առաջնությունում գրավել ենք 2-րդ տեղը, ունենք նաև անհատական հաջողություններ:

ՔՈՒԵՋ

Քուլեջն իր աշխատանքային գործունեությունն իրականացնում է համալսարանի և քուլեջի կանոնադրության հիման վրա՝ հիմնվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև՝ ինստիտուտի գիտխորհրդի որոշումների հիման վրա:

Քուլեջում դասավանդվող բոլոր առարկաների ծրագրերը կազմվել են միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա:

Մշտապես աշխատում ենք ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից վերանայված ուսումնական պլաններով :

Ստացել ենք մասնագիտական գրականություն ՄԿՈՒԶԱԿ -ի կողմից/ Հայոց լեզու, Հաղորդակցման հմտություններ, Ֆիզիկական կուլտուրա, Ինֆորմատիկա առարկաների դասավանդումը քոլեջներում/, որոնցով կատարվում է մոդուլային ուսուցումը քոլեջում:

Վերանայվել են 2203 «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության առարկայական ծրագրերը, ուսումնական պլանները՝ կապված լիցենզավորման աշխատանքների հետ:

Քոլեջը համագործակցում է Համալսարանի բոլոր կառուցվածքային միավորների և օղակների՝ ուսումնական վարչության, պրակտիկայի բաժնի, մշակույթի կենտրոնի, ռազմահայրենասիրական կենտրոնի, ուսանողական խորհրդի, ՈՒԳԸ-ի և ամբիոնների հետ:

Քոլեջում գործում են ներքոհիշյալ հանձնաժողովները.

- մրցութային
- բուհ-դպրոց կապի ապահովման
- արհմիության

Ուսանողների առաջադիմության արդյունքների հաշվառման համար ստեղծվել է քոլեջի մրցութային հանձնաժողով, որտեղ նաև ընդգրկված են յուրաքանչյուր կուրսից մեկ ուսանող: Մրցութային հանձնաժողովի կատարած աշխատանքների արդյունքների հիման վրա կատարվում է սովորողների փոխատեղում անվճար և վճարովի համակարգից:

Բուհ-դպրոց կապի ամրապնդման նապատակով կատարվում են գովազդային աշխատանքներ: Քոլեջի աշխատողները կազմակերպում են այցելություններ քաղաքի և մարզի դպրոցներ: Քոլեջում սովորում են Վրաստանից, Ջավախքից, ԼՂՀ-ից, ինչպես նաև ՀՀ տարածքի տարբեր մարզերից և քաղաքներից՝ Ալավերդուց, Մալիտակից, Գեղարքունիքից, Արմավիրից, Տավուշից եկած ուսանողներ:

Պարբերաբար անցկացվել են քոլեջի մանկավարժական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել և հաստատվել են առարկայան ծրագրերը, մոդուլային ուսուցման հետ կապված ուսումնառության նյութերը, ուսումնառության պլանները, դասավանդման նյութերը, ուսանողների փոխատեղումը, դասացուցակները և դասաբաշխումը :

Աղյուսակ 24.Քոլեջի ուսանողների թվաքանակը

h/h	Մասնագիտություն	Ուսումնական տարի			
		2011-2012	2012-2013	2013-2014	2014-2015
1.	Թարգմանություն և գործավարություն	21	45		81
2.	Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	-	-	9	13
Ընդամենը		94			

Հաշվետու տարում քոլեջից հեռացվել են 3 ուսանող:

Դասախոսներն օգտվում են ժամանակակից տեխնոլոգիաներից, ինտերակտիվ գրատախտակից: «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողների համար նախատեսված N 1 լսարանը կահավորվել է համակարգչային տեխնիկայով, որտեղ անցկացվում են դասերը:

«Թարգմանություն և գործավարություն» մասնագիտության ուսանողները մասնագիտական առարկաները պարապում են N 5 լսարանում, որը կահավորված է համապատասխան ստենդներով: Որոշ առարկաների դասերը պարապվում են լինգվաֆոնային և Մերգելյան կաբինետներում, լաբորատորիաներում:

Գործնական պարապմունքների ժամանակ կատարվում են աշխատանքներ, որոնք նպաստում են ուսանողների մոտ

մասնագիտական (եռալեզու թարգմանություն, ԷՀՄ ճարտարապետություն, օպերացիոն համակարգեր) հմտությունների, կարողությունների ձևավորմանը: Մատոցվող նյութը ավելի ակնառու և տեսանելի դարձնելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները::

Համագործակցում ենք այլ քոլեջների հետ՝ ուսանողների և դասախոսների մոտ գիտելիքների և փորձի փոխանակման նպատակով:

Քանի որ կոլեկտիվում հիմնականում ընդգրկված են երիտասարդ կադրեր, նոր մեթոդների յուրացման, հմտությունների ձեռքբերման, փորձի փոխանակման նպատակով պարբերաբար կատարվում են դասալսումներ:

2014-2015 ուստարվա առաջին կիսամյակում կատարվել են դասալսումներ (60 ժամ):

01.11.2014 - 30.11.2014 հայտարարվել էր բաց դասերի օրեր (12բաց դաս)՝ նախօրոք կազմված ժամանակացույցի համաձայն:

Ուսանողների մոտ մշակութային արժեքները բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվում են կինոդիտումներ (ազգային ազատագրական, պատմական), այցեր պատմամշակութային արժեք ներկայացնող վայրեր՝ թատրոններ, թանգարաններ և պատկերասրահներ, (հոկտեմբերի 1-30 հայտարարված էր մշակութային ամիս):

Բոլոր կուրսերում կազմակերպվել է «Գրքի ամիս» միջոցառում, որից հետո կատարվել է քննարկում, կազմակերպվել «Լավագույն կարդացող կուրս» մրցանակաբաշխություն (Թարգմանություն և գործավարություն 3-րդ կուրս), Անցկացվել են սեմինարներ՝ «Հայ եկեղեցին և աղանդները» և «ԳՄ սննդամթերք թեմաներով»:

3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների հետ կատարվում են շտեմարանային աֆիատանքներ միասնական քննությունների մասնակցելու համար՝ նախօրոք կազմված ժամանակացույցով (Հայոց լեզու-Ավդալյան Ա. , Անգլերեն լեզու- Մաթևոսյան Մ. , Ներկարարյան Տ., Ավալյան Ա., Ռուսաց լեզու - Խաչատրյան Ն.):

Բոլոր կուրսերում կատարվում են լրացուցիչ պարապմունքներ անզլերեն, ռուսերեն առարկաներից ըստ մակարդակների :

Առաջադիմության ներքին ստուգում անցկացնելու նպատակով նախօրոք կազմված գրաֆիկով յուրաքանչյուր ամիս մասնագիտական առարկաներից անցկացվում են ստուգողականներ, քննարկվում են արդյունքները, բացասական ստացած սովորողների հետ կատարվում են լրացուցիչ աշխատանքներ:

2013-2014 ուստարվա ընթացքում քոլեջի երեք դասախոսները մասնակցել են Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից կազմակերպված Հեռավար ուսուցման թիմի վերապատրաստում» դասընթացներին:

Մասնագիտական առարկաների դասախոսները մշտապես մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին :

Գնահատման համակարգում, կախված հինգբալային համակարգից անցում տաս բալային համակարգի, կազմակերպվել են դասընթացներ ՄԿՈՒԶԱԿ-ի ներկայացուցչի հետ :

2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում նախատեսված աշխատանքներ .

- Պետական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքներ
- Վիկտորինա պոլիտեխնիկական քոլեջի ուսանողների հետ
- Սպորտլանդիա /միջկուրսային /
- Եղեռնի 100 –ամյակին նվիրված միջոցառում

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման և սոցիալական այլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Այդ կապակցությամբ համալսարանի ռեկտորատը և արհեստակցական կազմակերպությունը որոշակի աշխատանքներ են կատարում, մասնավորապես, համալսարանում գործող՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին դրամական օգնություն, աջակցություն, պարգևատրում տալու» կարգի համաձայն՝ մի շարք աշխատակիցներ և դասախոսներ արժանացել են տարբեր խրախուսումներ և դրամական օգնության.

- համալսարանի 16 աշխատակիցներ հոբելյանական ծննդյան տարեթվի կապակցությամբ պարգևատրվել են դրամական պարգևներով՝/161063/ դրամ:
- 18 աշխատակիցների հատկացվել է 970.000 դրամ դրամական օգնություն,
- գրքերի հրապարակման համար 6 հոգի խրախուսվել է 380.000 դրամով, իսկ 12 հոգի այլ խրախուսումների համար՝955168 դրամով,
- առկա ուսուցման համակարգում սովորող և առաջին անգամ ամուսնացող մեկ զույգի հատկացվել է 50.000 դրամ միանվագ աջակցություն,
- երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ինստիտուտի 105 աշխատակցի՝ մինչև 12 տարեկան երեխա ունեցող, հատկացվել է 453.000 դրամ՝ /151 երեխա՝ յուրաքանչյուրին 3.000 դրամ/:

Այս տարի ևս «Բազում» ուսումնամարզական հանգրվանում գործող ճամբարում իրենց 15-օրյա հանգիստն անցկացրին մեր աշխատակիցների 57 երեխաներ, ինչպես նաև հյուրընկալվել են 15 երեխա Արցախից՝ ըստ կնքված երկարաժամկետ համագործակցության պայմանագրի:

Համալսարանի արհկոմը նույնպես աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանը ուղղված որոշակի աշխատանքներ է կատարել: Համալսարանի 43 աշխատակցի տրամադրել է դրամական օգնություն /445000 դրամ/, 2014 ուս. տարում գերազանց առաջադիմությամբ երկու ուսանողի հատկացրել է անվանական կրթաթոշակ՝ /150000 դրամ/, ֆինանսավորել է ֆակուլտետային և համաինստիտուտային բազմաբնույթ միջոցառումներ /Էքսկուրսիաներ, մարտի 8, ապրիլի 7, ապրիլի 24, անկախության օրվան նվիրված միջոցառում, գրադարանավարի, ուսուցչի հոգեբանի օրվան նվիրված միջոցառումներ և այլն /՝ 2.600.000 դրամ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնույթ աշխատանքներ են կատարվել նաև համակարգչային տեխնիկայի ներդրման և սպասարկման ուղղությամբ.

1. Իրականացվել են համակարգիչների վերանորոգման և սպասարկման ընթացիկ աշխատանքներ:
2. Իրականացվել է համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի վիճակի վերլուծություն՝
 - ճշտվել է ֆիզիկապես և բարոյապես մաշված համակարգիչների քանակը,
 - կազմվել է փոխարինման ենթակա համակարգչային հին պահեստամասերի ցանկ,
 - վերոհիշյալ տվյալները ներկայացվել են՝ տարեկան գնումներ իրականացնելու նպատակով:
 - Իրականացվել են համակարգիչների անձնագրավորում՝ տվյալների լիակատար արխիվ ձևավորելու նպատակով:

3. Համալսարանի ձեռքբերած համակարգչային գույքը՝ համակցված տպող սարքեր, անխափան սնուցման սարքեր, մոնիտորներ և այլ տեղակայվել է ըստ կարիքի:
4. Սպասարկող կազմակերպության հետ համատեղ ս.թ. ապրիլ-նոյեմբեր ամիսների ընթացքում վերականգնվել են 15 համակարգիչներ՝ գրեթե բոլոր պահեստամասերը փոխարինվել են նորերով, վերջիններիս վրա իրականացվել են ծրագրային լիակատար տեղակայումներ: Արդյունքում արդիականացվել է ակադեմիկոս Ս. Մերգեյանի անվան համակարգչային կենտրոնի փոքր սրահի համակարգչային տեխնիկան:
5. Իրականացվել է թիվ 3 լսարանում առկա բոլոր համակարգիչների օպերացիոն համակարգերի և ծրագրային ապահովման վերատեղակայում:
6. Կազմակերպվել է համակարգչային կարինետ ՎՊՀ-ի քոլեջի համար:
7. Կազմակերպվել է մուլտիմեդիայի միջոցներով ապահովված կարինետ ՎՊՀ-ի վարժարանի համար:
8. Վերակազմակերպվել է ներքին ցանցը: Փոխարինվել են արհկոմը մյուս ստորաբաժանումներին միացնող մալուխները: Իրականացվել է ներքին ցանցի ընդլայնում՝ միացվել է բուսաբանության և աշխարհագրության ամբիոնը, վերամիացվել է ՄԴՄ ամբիոնը: Վարչական մասնաշենքում իրականացվել է ներքին ցանցի վերափոխում՝ կապված համալսարանի կառուցվածքային փոփոխությունների հետ: Իրականացվել են ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ՝ ներառելով կառուցվածքային փոփոխություններ:
9. Ներքին ցանցին են միացվել վերականգնված համակարգիչները:
10. Իրականացվել է ներքին ցանցի աշխատանքը կազմակերպող սերվերների ծառայություններ

իրականացնող համակարգիչների օպերացիոն համակարգերի արդիականացում:

11. Պահպանվել է ներքին ցանցում առկա բոլոր համակարգիչների օգտագործողների համացանցի ծառայություններից օգտվելու հնարավորությունը:
12. Սերվերային համակարգում տեղակայվել է հակավիրուսային ծրագրի թարմացված տարբերակ, բոլոր համակարգիչները համապատասխանացվել են նոր ծրագրի հետ:
13. Բուհի կողմից ձեռքբերված համակարգչային գույքը՝ դիսփլեյներ, համակցված տպող սարքեր և հոսանքի ախափան սնուցման սարքեր, տեղադրվել են և ըստ անհրաժեշտության կատարվել ծրագրային տեղակայումներ և միացվել ներքին ցանցին:

Պլանավորված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ:

2015 թ. պլանավորվում է ընթերցասրահում տեղակայել տերմինալ սերվերներ 8 տերմինալով ուսանողների սպասարկման համար:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի կառավարման խորհրդի նիստով 2014թ. համար հաստատված բյուջեի գումարը նախատեսվել է 758 մլն 871 հազար դրամ, որը բաշխվել է համալսարանի կարիքներին համապատասխան ուղղություններով :

Աղյուսակ 25. ՎՊՀ ծախսերն ըստ տնտեսական հոդվածների.

<i>Անվանումը</i>	<i>Քուլեջ</i>	<i>Հենակետային վարժարան</i>	<i>Բուհ</i>	<i>Ներքին դրամաշնորհ և գիտական աշխատանքներ</i>	<i>Ընդամենը</i>
Աշխատավարձ և	8093.0	58580.0	569937.0	7100.0	643710.0

դրան հավասարեցված					
վճարներ		500.0	500.0		1000.0
Գույք և սարքավորումներ			500.0		500.0
Դեղորայք			1000.0		1000.0
Սննդամթերք	150.0	3500.0	35764.0	700.0	40114.0
Այլ ծախսեր	70.0	300.0	2300.0	3200.0	5870.0
Գործուղումներ			4400.0		4400.0
Տրանսպորտ	25.0	120.0	4900.0		5045.0
Կապ	100.0	1700.0	12500.0		14300.0
Էլ. էներգիա	90.0	2000.0	12500.0		14590.0
Վառելիք/գազ/	30.0	200.0	670.0		900.0
Զրնուղ	40.0	100.0	570.0		710.0
Այլ կոմունալ ծախսեր			3000.0		3000.0
Հարկեր և տուրքեր			1000.0		1000.0
Ներկայացուցչական ծախսեր		500.0	4200.0	300.0	5000.0
Ղեկավարի ֆոնդ			0		0
Մարքեր և սարքավորումներ	532.0		16200.0		16732.0
Կապիտալ ներդրումներ	9130.0	67500.0	670941	11300.0	758871.0

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների համար հատկացվել է 643710,0 հազ. դրամ , որը կազմում է բյուջեի 84.8 %-ը:

Մնացած գումարները ուղղվել են ինստիտուտը բնականոն աշխատելու համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, գործուղման ծախսերի, սարքավորումների նորոգման և սպասարկման, ինտերնետ կապի տրամադրման ,էլ. էներգիայի, գազի,ջրի կոմունալ և այլ ծախսերի վճարմանը:

Աղյուսակ 26.Այլ ծախսեր

	Այլ ծախսեր	Հազ. դրամ
1	Մամուլ	1000
2	Գրքեր,դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ	500
3	Գրենական պիտույքներ, տպարանի թուղթ	2000


4	Ընթացիկ նորոգումներ	2000
5	Տնտեսական ապրանքներ	1000
6	Տնտեսական կրթեր	1000
7	Նյութեր ուսումնական գործընթացի համար	300
8	Տպագրական ծախսեր	1000
9	ուսանողական տոմսեր	100
10	Դպրոցների հետ պայմանագրեր	4100
11	Մարզադահլիճների պայմանագրեր	1000
12	Բուժ. Հաստատությունների պայմանագրեր	1880
13	Ինտերնետ	1000
14	Գրքերի կազմում և ձևավորում	100
15	Հիմնադրամներին	4700
16	Դիպլոմներ	3000
17	Սարքավորումների նորոգում և սպասարկում	4000
18	Կադրերի որակավորման, սեմինարների անցկացման, ծրագրերի ձեռքբերման	4000
19	Չնախատեսված ծախսեր	353
20	Այլ պայմանագրեր	5981
21	Ուսանողական գիտական րնկերությանը	100
22	Ուսանողական խորհրդին	300
23	Օգնության ֆոնդ աշխատակիցների համար	500
24	Օգնության ֆոնդ ու սանողների համար	200
	Ընդամենը	40114

2014թ.-ի ՎՊՀ փաստացի մուտքերը առ 10.12.14թ. կազմում են 837 մլն 721 հազար 400 դրամ (աղյուսակ 3) նախահաշվով նախատեսված 758մլն 871 հազար դրամի դիմաց: Բյուջեն գերակատարվել է 10,34%-ով: Աշխատավարձի ֆոնդը փաստացի կատարված բուջեի հանդեպ կազմում է 76.8 %: Բյուջեի ավելացումը պայմանավորված է առկա և հեռակա համակարգերում դիմորդների բավարար քանակով, մագիստրատուրայի և հեռակայի ուսման վճարների ավելացմամբ, ինչպես նաև պետական բյուջեից կապված նվազագույն աշխատավարձի ավելացման հետ, լրացուցիչ գումարի հատկացմամբ:

Աղյուսակ 27. 2014թ բյուջեի կատարողականը մուտքերի մասով

1	Նախորդ տարվա մնացորդ	8871.0
2	Պետական բյուջեից	137296.4
3	Ուսման վճարներ առկա ուսուցումից	284624.5
4	ՈՒսման վճարներ հեռակա ուսուցումից	233850.5
5	ՈՒսման վճարներ մագիստրոսական ուսուցումից	53379.4
6	Այլ մուտքեր՝ այդ թվում	36696.8
	դիմորդներ	1709.0
	օտար լեզուների ուսուցում	1534
	պատճենահանում	323.6
	բանկոմատի շահագործում	600
	դրամաշնորհներ	29671.4
	պետ. քննությունների համար	105
	այլ	2753.8
7	Հենակետային վարժարան	72889.4
8	Քոլեջ պետական բյուջեից	4120
9	Ուսման վճարներ քոլեջից	5094.5
10	Ուսման վճարներ ասպիրանտական կրթությունից	144
11	Բազումի հանգրվանի կառուցապատման ֆոնդ	745.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝		837721.4

2014թ բյուջեի կատարողականը մուտքերի մասով տոկոսներով արտահայտված, ունի հետևյալ գրաֆիկական տեսքը:



Նկար 4. 2014թ բյուջեի կատարողականը մուտքերի մասով

Գրաֆիկով երևում է , որ մուտքերի 68.28%-ը կազմում են վճարովի համակարգի ուսանողների կողմից վճարած գումարները:Նախորդ տարվա համեմատ այն ավել է 7%:-ով: Պետական բյուջեի մասը 2014թ համախառն բյուջեում կազմում է 16.36 % նախորդ տարվա 15%:-ի դիմաց:

2014թ հունվար -նոյեմբեր ամիսների փաստացի կատարողականի հիման վրա և դեկտեմբեր ամսվա ծախսերի մոտավոր հաշվարկով տարեկան ծախսերը կունենան հետևյալ տեսքը:

Աղյուսակ 28. 2014 թ. փաստացի ծախսերը ըստ տնտեսական հոդվածների

Անվանումը	Քոլեջ	Հեռակետային վարժարան	Բուհ	Ներքին դրամաշնորհի և գիտական աշխատանքներ	Ընդամենը
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	6820	55579.9	508257.3	3118	573775.2
Գույք սարքավորումներ		250	500		750
Դեղորայք			420		420
Մենդամթերք			1000		1000
Ֆորձուղումներ	180	3500	26407.3		30087.3
Տրանսպորտ	80	300	3571	14284.5	18235.5
Կապ	25	120	4611		4756
Էլ. էներգիա	120	1700	9059.2		10879.2
Վառելիք/գազ/	110	2000	7794.3		9904.3
Ջրմուղ	50	200	375.6		625.6
Այլ կոմունալ ծախսեր	60	100	346.7		506.7
Հարկեր և տուրքեր			951.1		951.1
Ներկայացուցչական ծախսեր			1097.2		1097.2
Ղեկավարի ֆոնդ			1335.5		1335.5
Մարքեր և սարքավորումներ		200	3951.8		4151.8

Կապիտալ ներդրումներ					
Կրթաթոշակ	912		14254		15166
Ընդամենը	8354	63949.9	588130.5	17402.5	677836.9

Աղյուսակ 29. Այլ ծախսերի փաստացի կատարողականը


Հազար դրամ

	Այլ ծախսեր	Նախատեսված	Փաստացի	Տոկոս
1	Մամուլ	1000	1425.5	142.2
2	Գրքեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ	500	526	105
3	Գրենական պիտույքներ, տպարանի թուղթ	2000	1102	89.8
4	Ընթացիկ նորոգումներ	2000	994.4	49
5	Տնտեսական ապրանքներ	1000	932.8	93
6	Տնտեսական նյութեր	1000	850.1	85
7	Նյութեր ուսումնական գործընթացի համար	300	225.2	75
8	Տպագրական ծախսեր	1000	502.2	50
9	Ռեֆերատային տոմսեր, ստուգման գրքույկներ	100	153	153
10	Դիպլոմներ	3000	2936.8	98
11	Դպրոցներում պրակտիկաների պայմանագրեր	4100	2298.8	56
12	Մարզադահլիճների պայմանագրեր	1000	887	88
13	Բուժ. Հաստատությունների պայմանագրեր	1880	616	32
14	Ինտերնետ	1000	905	90
15	Գրքերի կազմում և ձևավորում	100	14.8	15
16	Հիմնադրամների	4700	2370	50
17	Հատկացումներ դեկանատներին			
18	Մարքավորումների նորոգում և սպասարկում	4000	5441.3	136
19	Կադրերի որակավորման, սեմինարների անցկացման, ծրագրերի ձեռքբերման	4000	309	8
20	Չնախատեսված ծախսեր	353		
20	Այլ պայմանագրեր	5981	6217.4	103
21	Ուսանողական գիտական ընկերությանը	100		

22	Ուսանողական խորհրդին	300	300	100
23	Աշխատակիցների համար օգնության ֆոնդ	500	1030	206
24	Ուսանողների համար օգնության ֆոնդ	200	50	25
Ընդամենը		40114	30087.3	75

2014թ.-ի ընթացքում հավաքագրված գումարներն ամբողջությամբ ծախսվելու են մինչև տարեվերջ՝ նախահաշվով նախատեսված և գնումների պլանով սահմանված ծախսերի շրջանակներում: Ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի համալսարանը կարողացավ կատարել բյուջեն սեփական միջոցներով, առանց դիմելու վարկային կազմակերպությանը:


Համալսարանի ուսանողների թվաքանակը վերջին հինգ տարիներին նվազել է:




Նկար 5. Ուսանողների թվաքանակը վերջին հինգ տարիներին

Հետևաբար, նվազել է նաև բուհի վերջին հինգ տարիների բյուջեն:

2014թ բուհն աշխատել է պահպանել և նույնիսկ որոշ դեպքերում ավելացնել (կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ) աշխատակիցների վարձատրության չափը:



Նկար 6. Բուհի բյուջեն 2010-2014 թթ.



Նկար 7. Աշխատավարձի չափին ընդհանուր բյուջեր հանդեպ (2010-2014 թթ.)

Աղյուսակ 30. Համայնարանի հաշվեկշիռը 01.11.2014թ. դրությամբ

ՀԱՇՎԵԿՇԻՌ Առ 01.11.2014 թ			
1. Պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը _Կրթության և գիտության նախարարություն			
2.ՊՈԱԿ-ի անվանումը- Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ ՊՈԱԿ			
7. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	Բաժին N		
	Խումբ N	O9	
		O2	
	Դաս N	O4	
		Չափի միավորը՝ <i>հազար դրամ</i>	
		տարեսկիզբ	հաշվետու ժամանակաշրջանի վերջ
ԱԿՏԻՎ			
ԸՆԴԱՄԵՆԸ	ՈՉ ԸՆԹԱՑԻՎ ԱԿՏԻՎՆԵՐ	477318.9	479538.6
այդ թվում		x	x
Հիմնական միջոցներ (կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող)		157667.7	315929
Ամրացված գույք		315929	315929
Երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ՝ հողամասեր		3722.2	3722.2
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		0	
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻՎ ԱԿՏԻՎՆԵՐ		110440.7	195756.3
այդ թվում		x	x
Ապրանքանյութական պաշարներ		43075	38585.8
Դեբիտորական պարտքեր առևտրային գործունեությունից		4126.9	8180.6
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		14759	8892.2
որից՝			
հարկային գերավճարներ		14759	8892.2
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		178.6	1200
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		8870.9	130862.6
Այլ ընթացիկ ակտիվներ		39430.3	9235.1
ՀԱՇՎԵԿՇԻՐ		587759.6	675294.9
ՊԱՍԻՎ		տարեսկիզբ	հաշվետու ժամանակաշրջանի վերջ
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		156471.9	254273.4
այդ թվում		x	

Չբախշված շահույթ	156471.9	254273.4
Սեփական կապիտալի այլ տարրեր	0	
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	335929	315929
այդ թվում	x	x
Չետափզված հարկեր		
Ամրացրած գույքի արժեք	315929	315929
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	20000	
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	95358.7	105092.5
այդ թվում	x	x
Կրեդիտորական պարտքեր առևտրային գործունեության գծով	6795.3	2640.1
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	1663.4	8390.8
Այլ ընթացիկ պարտավորություններ	86900	94061.6
ՉԱՇՎԵԿՇԻՈՒ	587759.6	675294.9

Ներկայացված հաշվեկշիռից երևում է, որ ինտիտուտի նյութատեխնիկական բազան նախորդ տարվա հանդեպ 10 ամիսների ընթացքում աճել է 2 մլն 219 հազար դրամով:

Մինչև սույն թվականի փետրվարի 1-ը հաստատվել է 2014 թվականի գնումների պլանը, որի համար 2014 թ.-ի բյուջեի նախահաշվում նախատեսվել է 81317500 մլն. դրամ, որից առ 01.12.2014թ. ծախսվել է 62194972 դրամ կամ նախատեսված գումարի 76.48 %-ը: ՎՊՀ կարիքներին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սկսվել են գնումների կազմակերպման գործընթացները:

Շրջանակային համաձայնագրերով իրականացվել է յոթ մրցույթ, որից երեքը՝ «ՎՊՄԻ - ՇՀԱՇՁԲ 11/4-14/1», «ՎՊՀ - ՇՀԱՊՁԲ 11/2-14/4» և «ՎՊՀ - ՇՀՏՁԲ 11/11-14/2» ծածկագրերով ՇՀ ընթացակարգերը գնահատող հանձնաժողովը հայտարարել է չկայացած, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

ԲԸԱՀ ընթացակարգով կնքվել են բազմաթիվ պայմանագրեր, որոնք իրականացվել են պատշաճ և լիարժեք:

Գնումներ կատարվել են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա:

Հավելված 1-ում ներկայացված են 2014 թվականի տասնմեկ ամիսների (հունվար-նոյեմբեր) ընթացքում կատարված գնումները:

Աղյուսակ 31.2014 թվականի տասնմեկ ամիսների (հունվար-նոյեմբեր) ընթացքում կատարված գնումները:

Հ/Հ	Դրամական միջոցների էլքեր	Տարեկան հաստատված գուցանիշ	Կատարողական	Մնացորդ
Ապրանքներ				
1	Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր	1130000	1101694	28306
2	Շինանյութեր	995000	994410	590
3	Տնտեսական, սանհիգենիկ, լվացքի միջոցներ	950000	850150	99850
4	Դեղագործական արտադրանք	430000	420200	9800
5	Համակարգչային տեխնիկա	4200000	4151820	48180
6	Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա, կենցաղային սարքեր	150000	125010	24990
7	Բենզին պրեմիում	2400000	2165500	234500
8	Մանդամթեքք	999990	999982	8
9	Ավտոպահեստամասեր	990000	976000	14000
10	Հանդերձանք և անկողնային պարագաներ	226600	82700	143900
11	Գրասենյակային և կենցաղային կահույք	720000	720000	0
12	Ծաղիկներ և ծաղկեպսակներ	350000	247700	102300
13	Լրատվամիջոցներ/ տեղեկագրքեր, մամուլ/	1549000	1425500	123500
14	Գրքեր	550000	526000	24000
15	Ուսումնական պրոցեսի համար նյութեր	100000	50106	49894
16	Պարարտանյութեր	50000	41000	9000
17	Սպորտային պարագաներ	700000	572100	127900
18	Պլաստիկ քարտեր	500000	500000	0
Աշխատանքներ				

1	Հատուկ պաշտպանվածություն պահանջող՝ պետական նշ. փաստաթղթերի տպագրություն	3000000	2926800	73200
2	Տպագրություն	950000	502230	447770
3	Արխիվի վերանորոգում	250000	249000	1000
4	Օտար լեզվի ամբիոնի վերանորոգում	120000	119500	500
5	Մեդալների և կրծքանշանների պատրաստում	210000	0	210000
Ծառայություններ				
1	Սարքերի և սարքավորումների սպասարկում	5250000	5246320	3680
2	Ինտերնետային կապի տրամադրում	990000	905000	85000
3	Տրանսպորտային միջոցների տեխն. սպասարկ	990000	352000	638000
4	Հեռուստատեսային և ռադիո հեռարձակման ծառայություն	600000	208000	392000
5	Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում	690000	606000	84000
6	Տանիքի հրդեհապաշտպան մշակում	870000	0	870000
7	Մամուլում հայտարարությունների հրապարակում	350000	250830	99170
8	Տրանսպորտային փոխադրումներ	250000	167580	82420
9	Տեխնիկական անվտանգության փորձաքննության ծառայություն	103000	103000	0
10	ՎՊՀ-ին պատկանող գույքի գնահատում	70000	70000	0
11	Փոստային ծառայություն	240000	236525	3475
12	Տրանսպորտային	700000	0	700000

	ապահովագրության			
13	Անշարժ գույքի վարձակալություն	1000000	887200	112800
14	Նոտարական ծառայություններ	100000	2500	97500
15	Պարտադիր բժշկական գնումություն	990000	0	990000
16	Ուսումնական և արտադրական պրակտիկա	4100000	2298785	1801215
17	Ցուցանակների պատրաստում	50000	34500	15500
18	Լուսանկարների տպագրում	20000	0	20000
19	ՎՊՀ-ի կաթսայատան շրջանառու էլեկտրաշարժիչի վերանորոգման ծառայություն	120000	120000	0
20	Ջրի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	810000	625639	184361
21	Գազի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	14544910	9904366	4640544
22	Գազասպատման համակարգի տեխ. հսկողություն	400000	226983	173017
23	Էլեկտրականության բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	14100000	10879181	3220819
24	Աղբահանության ծառայություն	400000	326700	73300
25	Ծխնեղյուզների սպասարկում	55000	54000	1000
26	Հիգիենիկ հակահամաճար. ծառ.	180000	180000	0
27	Հեռահաղորդակցման ծառայություններ	5045000	4519961	525039
28	ՀՂՄ-ների սպասարկում	72000	62400	9600
29	Օբյեկտների պահպանման ծառայություն	3260000	2980000	280000
30	Դիտահորերի մաքրման ծառայություն	30000	25000	5000
31	Երաժշտական գործիքների	50000	45000	5000

	վերանորոգում			
32	Անցակետի ծրագրային սպասարկում	195000	195000	0
33	ՎՊՀ-ի կայքի սպասարկում	110000	104300	5700
34	Կնիքների պատրաստում	106000	106000	0
35	Կարի ծառայություն	5000	5000	0
36	Գազի լիցքավորման ծառայություն	10000	6800	3200
37	Գազաեռակցման ծառայություն	30000	5000	25000
38	Մուգուկի ավտոպահեստամասերի միակ ներկայացուցչից տեխնիկական սպասարկման ծառայությունների՝ ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում	2905000	702000	2203000
39	Էլեկտրոնային ստորագրության սպասարկման ծառ	6000	6000	0
Ընդամենը		81317500	62194972	19122528

2014թ. իրականացվել են համալսարանի և Բազում ուսումնամարզական հարգրվանի ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքներ:

**ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Բազմաբնույթ են եղել նաև համալսարանի Մշակույթի կենտրոնի գործունեությունը. ինստիտուտում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին աջակցում, ՎՊՀ շրջանակներում միջոցառումների համակարգում, ուսանողության գեղագիտական ճաշակի և որակի բարձրացում, ՎՊՀ ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացման խթանում, տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում, ներինստիտուտային, արտաինստիտուտային և միջբուհական

մշակութային միջոցառումների փառատոնների անցկացում, համերգների և ներկայացումների կազմակերպում և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել են մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ, Ֆիլմերի, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումներ և քննարկումներ, որոնք նպատակաուղղվել են ուսանողների գեղագիտական ճաշակի ձևավորվելուն («Աբգար Դպիր», «Լիր արքա», «Չար ոգի» ներկայացումներ, «Ես կին եմ», «Ու՛մ մտքով կանցներ» ինտերակտիվ ներկայացումներ և այլն):

Կազմակերպվել են ներհամալսարանական, արտահամալսարանական և միջբուհական մշակութային միջոցառումների, փառատոնների, համերգների և ներկայացումների կազմակերպում, մասնակցություն և քննարկումներ («Ճանաչենք մեր քաղաքի արվեստագետներին» հանդիպումներ Ռոզա Մխիթարյանի, Վրույր Հարությունյանի հետ, Էլֆիկ Զոհրաբյանի «Հոգևիճակ 13» գրքի քննարկում և այլն, «Ստեղծագործում են ՎՊՀ աշխատակիցներն ու ուսանողները» շարքից 5 հանդիպում (Մետաքսե Դավթյան «Ես կարոտել եմ... »), «Լավագույն կուրս, լավագույն ուսանող» մրցանակաբաշխություն, «Սագիստրոսների ավարտական երեկո» և այլն):

Ուսանողության շրջանում տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերման շնորհիվ ՎՊՀ ստեղծվեց կիթառի խումբ, վերակազմավորվեցին վոկալի, ժամանակակից պարերի խմբերը, գրական և թատերական խմբակները, ժողովրդական պարի խումբն ու վոկալ գործիքային համույթը, որոնք դեկավարում են մեր ուսանողները՝ հասարակական սկզբունքով :

Ազգային արժեքների սերմանման, ձևավորման աշխատանքների շնորհիվ ուսանողների և աշխատակիցների շրջանում սիրվեց «Սուրբ Սարգիս գորավարի տոնակատարությունը»՝ այս տարի «Միրո երջանիկ ըոպեներ» խորագրով, որը ևս կդառնա ավանդական:

Ազգային արվեստի, մշակույթի, երաժշտություն արոպագանդումն իր զգալի ազդեցությունն ունեցավ «Մովորում ենք հայրենասիրական երգեր» ռեկտորի առաջարկած մրցույթի կարգի և անցկացման կանոնակարգի մշակման գործընթացում, որի մեկնարկը տրվեց ՎՊՀ Արհկոմի, Մշակույթի կենտրոնի և Արվեստի ամբիոնի համատեղ ջանքերով :

Հայրենասիրական և այլ ազգերի նկատմամբ հանդուրժողականության դաստիարակումը մի շարք ավանդական միջոցառումների համար խթան են: (Օրինակ, Սամեամյան արշավ դեպի Մայմեխ լեռան ստորոտ՝ նվիրված ՀՀ անկախությանը, Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ավանդական շաբաթ, «Մասլենիցա» տոնախմբություն, «Հելոին» և այլն:)

Մշակույթի կենտրոնը անմասն չի չմնացել տարվա հիշարժան իրադարձություններին (Պ.Սևակի 90 և Հ.Սահյանի 100 ամյակներին):

Կազմակերպվել է «Նվիրիր գիրք Հայ զինվորին» ակցիան, որին ուսանողները մասնակցել են յուրահատուկ ոգևորվածությամբ:

«Աշխարհն ուսանողի աչքերով» խորագրով ֆոտո մրցույթը մեր ուսանողության աշխարհայացքի, քաղաքացիական դիրքորոշման, միջավայրի ընկալման յուրօրինակ բացահայտումն էր:

Շատ կարևոր են ուսանողության և անձնակազմի հանգստի, մարզային վիճակի բարելավման հարցերը: Այդ նպատակով Բազում ուսումնամարզական հանգրվանի տարածքում մարզահամալիրի կառուցման նպատակով դրամահավաքի կազմակերպում՝ ֆլեշ-մոբ միջոցառում:

Հաշվետու ողջ տարում Մշակույթի կենտրոնի կողմից ցուցաբերվել է բազմաբնույթ աջակցություն ՎՊՀ կազմակերպվող բոլոր միջացառումների կազմակերպմանը և անցկացմանը:

Շուրջ 6 տարի է, որ ՎՊՀ Բազում ուսումնամարզական հանգրվանում գործում է «Աստղիկ» ճամբարը, ուր իրենց

ամառային հանագիստ են անցկացնում մեր բուհի աշխատակիցների երեխաներն ու թոռնիկները: Այս տարի հանգստացել են շուրջ 70 երեխա, որից՝ 17-ը Արցախից ժամանած հյուրեր էին, որոնց համար կազմակերպվել է շուրջօրյա հանգիստ 15 օր տեւողությամբ: 15 օր շարունակ կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ, ճանաչողական և պատմական էքսկուրսիաներ (Հաղպատ, Մանահին և այլն), ուխտագնացություն դեպի Կամակատար կոչվող մատուռ, ինտերակտիվ և ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, միջոցառումներ («Հեքիաթի աշխարհում», «Ամառնամուտն Աստղիկում» խորագրով ճամբարի բացման միջոցառում, «Մպորտլանդիա», «Անվտանգության այբուբեն», «Ձեզ տեսնենք...», կավճանկարչություն, ցուցահանդես, «Խոհարարները՝ ճամբարականներն են», «Մա մեր տունն է» խորագրով հանդիսավոր փակման արարողություն և խարույկ: Ընտանիքի տարվա կապակցությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ և հանդիպումներ: Հանգրվանի բակում տեղադրվել է լողավազան, բարեկարգվել են խաղահրապարակները, ընդլայնվել է հեքիաթային հերոսների պուրակը, տեղադրվել են թենիսի սեղան, վոլեյբոլի ցանց, ճոճանակներ և ստեղծվել են ժամանցի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ճամբարի աշխատանքների համապարփակ գործունեությունը ներկայացվել է հուշալրումում:

Դժվարություններ կան ֆակուլտետների մշակութային գծով պատասխանատուների համակարգման խնդրում:

2014-15 ուստարվա առաջին կիսամյակում Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ, կինոդիտումներ: Մշակույթի կենտրոնը կազմակերպում է միջոցառումներ, ապահովում տեխնիկական աջակցություն, գրում սցենարներ, հատկացնում երաժշտական և պարային համարներ: Կենտրոնում գործող բոլոր խմբակներն անվճար են և գործում են կամավոր սկզբունքով:

2014թ. կազմակերպվել են միջոցառումներ.

- «Գիտության, գիտելիքի և դպրության օր»
- «Բաց դաս - հայրենասիրություն» հանդիպում 3-րդ բանակային կորպուսի անձնակազմի հետ
- «Ֆինասական հաշտարար» սեմինար
- ՀՀ անկախության տարելիցին նվիրված ամենամյան արշավ դեպի Մայմեխ լեռան ստորոտ՝ սպորտային խաղերով և երաժժության կատարումներով հազեցած
- Սոցիալական մանկավարժի միջազգային օր /Ս. Բեժանյան/
- III Международная конференция „Язык и литература в контексте межкультурной коммуникации“
- «Пою тебя, душа Россия» - Գրական-երաժշտական երեկո /հյուրեր Ս. Պետերբուրգից/
- Հանդիպում Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնի դերասանների հետ
- Հ. Շիրազին նվիրված Ասմունքի փառատոն /Ա. Իսկանդարյան/
- «Զինվորը չի մեռնում» /Յու. Ղուլյան/
- «Երազանքներն իրականանում են» մենահամերգ ռ.լ.գ.3 կուրսի ուսանողուհի Մարինա Մանուկյան՝ նվիրված ՎՊՀ հիմնադրման 45 ամյակին և «Ստեղծագործում են ՎՊՀ ուսանողներն ու աշխատակիցները» շարքից
- Վարժարանի անվանակոչման միջոցառում /հետախույզ Ջորիկ Գևորգյանի անունով/
- «Հոգեբանի օր»/Հոգեբանության ամբիոն/
- Վիկտորինա ՎՊՀ ուսանողների հետ
- «Նկարում եմ» գրքի շնորհանդեսը /միջոցառում ՎՊՀ աշխատակիցների երեխաների և թոռնիկների մասնակցությամբ/
- «Ուզում եմ լույսն ինձ ուղեկից լինի» պատմ. 1-ին կուրսի ուսանողուհի Մարինե Նահապետյանի ստեղծագործական երեկո՝ նվիրված ՎՊՀ հիմնադրման

45 ամյակին և «Ստեղծագործում են ՎՊՀ ուսանողներն ու աշխատակիցները» շարքից

➤ « Ամանորյա դիմակահանդես»

Առաջիկա տարում Ինստիտուտի քաղաքականության գլխավոր շեշտադրումը պետք է ուղղված լինի մինչև այժմ նախաձեռնած գործերը ավարտին հասցնելուն՝ կարևորելով դրանց բովանդակային պլանի կատարելությունը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 2015 թվականի անելիքների ցանկում ավելի շատ տեղ են գտել ինքնավերլուծության արդյունքում վերհանված թույլ կողմերի վերացման ուղղությամբ աշխատանքները և միջոցառումները:

2015 թ. կնշանավորվի նրանով, որ համալսարանի պատմության ողջ ընթացքում առաջին անգամ սեփական միջոցներից (ոչ բյուջետային) մոտ 56 մլն դրամ է նախատեսվում գիտական հետազոտությունների համար. նախատեսվում է գումարներ տրամադրել ներբուհական դրամաշնորհներին, գիտական գործուղումներին, աշխատակիցների աշխատությունների տպագրությանը և այլն: Դա կնպաստի նպատակաուղղված հետազոտություններ կատարելուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ